

Մանրագրություններ, անձնանունների բառաօտեր և բառաօտեր կազմեց
ԱՂԻՍ ՄԱՆՈՐԿՅԱՆԸ

Եկա՛նե՛ր՝ ԱՐԱ ԲԵՔԱՐՅԱՆԻ

Կազմը, անվանաբերը և շնորհախոսույնները՝
Ք. ԲԵՒԲՈՍՈՎԻ

А. ПАРОНЯН

ИЗБРАННЫЕ СОЧИНЕНИЯ

Том I

(На армянском языке)

Армянское государственное издательство (Айпестрат)
Ереван, 1954

Ապագա սերունդներ, դուք այն խոնարհեցուցեք ձեր ականգր
և երկչու դածութեանք բարութ ինձ, ինչ որ ձեր նախահայրի-
քեն մին քրայու պատիվն ունիմ, որ ձեր բարօրութեան համար
աշխատողներեն մին եմ:

Համբ քրայր բան մը չէ, լեզու ունենալ և ժողովրդյան
իրավանց պաշտպանութեանը համար չխոսիլք՝ համբ և Վասակ
քրայ է. կույր քրայր բան մը չէ. աչք ունենալ և իրավանց
հավասարութեան թեմաները՝ կույր և միանգամայն գերի՝ քրայ
բան է:

Թող կարգի՝ աշդպիսի լեզու մը, մեզ փույթ չէ՛... Թող հա-
նեն՝ աշդպիսի աչք մը, ուրախ կրկանը. սրովհետև լավ է հա-
մբ և կույր քրայ, բան թե համբ Վասակ և կույր գերի:

Թերութեաններու վրա լալն թերութեաններու մեծա-
պայնն է. խեղճութեան վրա արտասուք թափելն՝ ապացուցել
է, թե արշուն չունինք թափելու:

Պիտի հարածվիմ, պիտի ծեծվիմ: Վասա չունի, Սոկրատ ալ
հարածվեցավ. ապագա սերունդը պիտի անմահացնեն իմ անունը:

Հակոբ Պարոնյան:

ՀԱԿՈՐ ՊԱՐՈՆՅԱՆ

(1842—1891)

Հայ խոշորագույն երգիծաբան Հակոբ Պարոնյանը մեր նոր գրականության ամենաականավոր ներկայացուցիչներից մեկն է, ռեալիստական արժակի և գրաքննադատության սկզբնավորողը արեւմտահայ իրականության մեջ:

2. Պարոնյանը իր գրականագիտական ըմբռնումներով հիմնականում շարունակել է Մ. Նալբանդյանի տրագիցիաները: Պաշտպանելով գրականության ժողովրդայնության, գրականությունը աշխատավոր ժողովրդի շահերին ծառայեցնելու գաղափարը, նա իր խորապես սոցիալական ու քաղաքական սատիրայով անխնա պայքար է մղել շահագործող դասակարգերի դեմ: Կանգ շատնելով ո՛չ նյութական դժվարությունների, ո՛չ քաղաքական հայածանցների առաջ:

Մանդժագործելով հանդերձ՝ ընդամենը երկու տասնամյակ, Պարոնյանը հայ նոր գրականությանը հարստացրել է տարբեր ժանրերի մի շարք մնայուն նրկերով, որոնք հայ գրականության ամենափայլուն էջերից են:

Պարոնյանի գրական ժառանգությունը, շնորհիվ իր գեղարվեստական խոշոր արժանիքների և սուսազմոր, դեմոկրատական բովանդակության, պահել է իր թարմությունն ու հետաքրքրությունը և այսօր, սովետական կարգերում, ոչ միայն հայ աշխատավորության ամենասիրած ընթերցանության նյութներից մեկն է, այլև թարգմանվելով ռուսերեն՝ դարձել է Սովետական Միության բազմազգ ժողովուրդների սեփականությունը: Պարոնյանի կերտած բազմաթիվ կերպարներ, որոնք պատկերում են 19-րդ դարի 70—80-ական թվականների հայ հասարակական հասանքների ներկայացուցիչներին, մտել են հայ գրականության տիպերի պատկերասրահը և վառ կերպով ներկայացնում են անցյալ դարի արեւմտահայ հասարակական կյանքի հարազատ պատկերը, օգնում այդ կյանքի ճշգրիտ նանայմանը:

Պարոնյանի սրամիտ, գիպուկ ու բազմարովանդակ աֆորիզմները, թնավոր խոսքերը մանչ են ժողովրդական բոստ ու բանի հարուստ զանձարանը և լայնորեն օգտագործվում են գրականության մեջ ու աւօրյա կյանքում:

1

2. Պարոնյանը ծնվել է 1842 թվականին, Թյուրքիայի Ադրիանուպոլիս քաղաքում: Նախնական կրթությունն ստացել է ծննդավայրի Արշակունյաց դպրոցում:

Ակնարկելով իր սովորած տարիների դպրոցները, Պարոնյանը գրում է, «մեյն ատենները վարժարաններու մեջ ամեն բան կգանվիր, բացի ոտումն»:

Երեխաներին ու պատանիներին ժամանակի սոցիալական-քաղաքական հարցերից հետո:

պահելու նպատակով, նրանց ուղեղը թթաղելու և ին կրտսերական համատարիքներով, սրբերի շինելու վարքագրութիւններով, սուտարյալների գործերով:

Մատուցիչները ոչ այնքան մտահոգված էին նրանց հետևողական օգտակար գիտելիք տալով, որքան դժգոհների հոգաբարձու ազաների, ամիրաների ցանկութիւնները կատարելով, նրանց հաճոյանալով ձեռն ատենները,— գրում է Հ. Պարոնյանը,— անիրավութեանը ճշմարտութեան ներկայացուցիչն էր, բռնութիւնը զուգուրան ի ձեռին կնակագահներ, արդարութեան ամբողջ գրաւ ամիրաներուն կամքը բազմած էր:

Ամիրայի մը թաշկինակին դեմ խոսիլը երկնքի դեմ ապստամբիչ էր:

Արշակունյաց վարժարանն ավարտելուց հետո, 1857 թ. նա ընդունվում է Ադրիանուպոլսի համահան դպրոցը, որտեղ մի տարի սեռին չնկատելով զժամարութիւնները սովորելով՝ թողնում-հեռանում է, երբեք այլևս փորձ չանելով որն է դպրոցում սովորելու:

Այն, ինչ որ շին կարողանում տալ ժամանակի հետամնաց այդ նրկու դպրոցները, Պարոնյանը փորձում է ձեռք բերել ինքնազարգացմամբ: Ընթերցումը կերպով սովորում է համարեն, ֆրանսերեն, իտալերեն, մասամբ քի քուլտուրներն, որոնց իմացութեանը հնարագործութիւնն է տալիս նրան ուսումնասիրելու համաշխարհային գրականութեան և հատկապէս անտիկ գրականութեան խոշոր ներկայացուցիչների ստեղծագործութիւնները:

1864 թ. Հ. Պարոնյանը տեղափոխվում է Կ. Պոլիս:

Հ. Պարոնյանի դեմոկրատական աշխարհայացքի ձևավորմանը խոշոր շարժում նպաստում է այն փաստը, որ նա Կ. Պոլիս գալու առաջին օրերից կապվում է Մ. Նալբանդյանի զազափառական ազգեցութեան տակ գտնվող դեմոկրատական ինտելիգենցիայի հետ և այդ միջավայրում է, որ ուսումնասիրում է հայ հասարակական կյանքը, փորձում այն արտացոլել իր առաջին աշխատութիւններում:

1865 թ. նա գրում է «Երկու տերով ծառու մըն կոմեդիան», որը խոստապահանք հեղինակը համարել է զեղարկեստական տեսակետից անկատար գործ և չի հրատարակել իր կենդանութեան օրով:

Պարոնյանը 1867 թ. գրում, 1868 թ. լույս է ընծայում «Առաջնաբայտն արևելյանս կոմեդիան», իսկ 1872 թ. գրում է «Շողորորթը»:

Ինչ խոսք, որ նրա այս առաջին տողագործութիւնները իրենց վրա կրում են սկսական հեղինակի անտրոսոփեան կնիքը, սակայն զրանք իր ժամանակի համար նորութիւնն էին և կոչված էին վերջ դնելու ազդարանական ուսմանակական, զերադատեցապես պատմական անցյալը պատկերող մի դրամատուրգիայի, որը նոր զարգացող տրեմատուրգ գրականութեանը տալիս էր սխալ ուղղութիւն, հետապնդելով մի նպատակ՝ փախուտ իրականութեանց, սոցիալական հուզող հարցերից, փախուտ դեպի պատմական անցյալը, որ ներկայացնում էր իդեալականացված ու տղամտղված ձևով:

Պարոնյանի կոմեդիաներում պատմական անցյալի փոխարեն մեծ տաղանդով արտացոլվում էին պոլտուրայ թուրքուազիայի ընտանեկան բարբոթը, ցուցադրվում էր ժամանակակից կյանքը իր բարդ հակասութիւններով:

Դժբախտաբար, այդ առաջին կոմեդիաները հեղինակի կենդանութեան օրով չեն բնադրվել:

Այդ թվականներին Պարոնյանը մի քանի տարի պաշտենավարում է Կ. Պոլիսի Ակյուտար թաղի դպրոցում, որտեղ սովորել է երիտասարդ բանաստեղծ Պետրոս Դուրջանը: Պարոնյանը առաջինը զնահասում է Դուրջանի բանաստեղծական առաջնորդ, քաջաչիքում նրան՝ հրատարակելով նրա առաջին բանաստեղծութիւնները:

1870 թ. սկզբներին Պարոնյանը ձեռնարկում է «Փող առավոտյան» պարբերականի հրատարակութեանը, սակայն նշույթական զժամարութիւնները հարկադրում են նրան զազաբնեցնել ան՝ հազիվ 28 համար հրատարակած, որից հետո ժամանակի լիբերալ հրատարակատեսիկից

Մ. Յելեկյանի «Եփրատ» թերթում լույս է ընծայում երգիծական մի թանի գործ, հենց առաջին սրվանից իր վրա հրավերելով հասարակության ուշադրությունը:

Նստ չափավոր ուժերի տեր Յելեկյանը, որը շարունակ իր շաշկան պոեզիայում «Հայաստանը կողբար, թնայեա ինքն ալ Հայաստաննն աղեկ վիճակ մը շունեթո, նկատելով, որ Պարոնյանի ծավալած պայքարի հետևանքով իր համար կարող են անախորժ. անակնկալներ ստեղծվել, թերթի խմբագրությունը հանձնում է Պարոնյանին, ինքը մնալով որպես արտոնատեր-հրատարակող:

Պարոնյանը «Եփրատ» խմբագրում է 1871 թ. հոկտեմբերից մինչև 1872 թ. հուլիս ամիսը: Վերհիշելով այդ շրջանը, մեծ երգիծաբանը «Ազգային շոշերի» մեջ գրում է. «Եփրատ» որ ուրիշներուն, ինչպես նաև այս տողերը գրողին խմբագրության ներքև ալ հրատարակվեցավ, բայց վերջապես օր մը, առանց հրամանի հրատարակած ըլլալուն համար, իսպառ խափանեցավ: Այս խափանման վրա Յելեկյան էֆենտի ուսանավոր գրելով շտապագամ:

Այս վկայությունից երևում է, որ Պարոնյանի խմբագրած հենց առաջին թերթը՝ «Եփրատ»-ը, խափանվել է օրինապահություն համար:

«Եփրատ»-ի ղազարումից հետո նա առանձին թերթ ունենալու ժամից մի առ ժամանակ հրատարակում է և աշխատակցում Հ. Սվաճյանի «Մեղու» պարբերականին, որը, ինչպես Մ. Նալբանդյանն էր ասում, հանդիսանում էր «Ժողովրդի մարտի բերանը, ազգի ցավերի և ուրախությունն նշարտապես հայտարարը»:

Որ գրական կյանքը հենց առաջին տարիներից ժամանակի ամենազորոգրեսիվ պարբերականի հետ կապելը բախտարար և վճռական նշանակություն է ունեցել Հ. Պարոնյանի աշխարհայացքի ձևավորման, գրական-հրատարակատեսական հետազոտող գործունեության համար, գործունեություն, որանդ որոշակի նկատելի է Մ. Նալբանդյանի գաղափարական ազդեցությունը:

«Մեղու»-ում Պարոնյանը տպագրում է քաղաքական սրությունը հագեցված իր երգիծական ստեղծագործությունները: Ազգային իշխանությունները, չիրերալ մամուլը և ամբողջ ռեակցիոն հասանքը կատաղի թշնամանքի աչիք են բարձրացնում խիզախ հրատարակախոսի դեմ՝ երան մեղադրելով հասարակական կյանքում միայն վատը տեսնելու, մարդու միայն ըննադատելի կողմերը նկատելու մեջ:

Հ. Պարոնյանը նման մեղադրանքների պատասխանելով է, որ հետադարձում գրել է. «Մարդերու թերությունները տեսնելու համար է, որ շնո սիրելի ցանկեր և ոչ թե զանկեր չսիրելու համար՝ անոնց թերությունները միայն կատեսնելու»:

Հակառակ ռեակցիոն հոսանքի այդ վայելատունին, կարև ժամանակամիջոցում Պարոնյանը շահալված ու սիրված հեղինակություն է դառնում ոչ միայն մայրաքաղաքում, այլև գրավառում:

Հ. Սվաճյանը, հանձին Պարոնյանի տեսնելով իր քաղաքական ծրագրերի չափազույն պաշտպանողին ու մի եզակի տաղանդի, 1872 թ. նոյեմբեր ամսին «Մեղու» խմբագրությունը հանձնում է նրան, մի հայտարարությամբ, որանդ նկատագրելով պարբերականի հրատարակման գործում իր կրած դժվարությունները՝ գրում էր.

«Շատերը կըսեն մեզի որ օգնական մը գտնենք: Բայց թե՛ դրելու կարող և թե՛ «Մեղու»-ն արդյունքովը անոթի մնալ հանձն առնող սեռ մը գտնել որչա՛մ դժվար էր»:

«Մեղու»-ին թե անոր ընթերցողներուն, չգիտենք որին բախտն էր, որ այս օրերս ձեռք տնցուցինք այնպիսի բարեկամ մը, որ վերահիշյալ նրկու հատկություններուն վրա ազդին անկուտի ծառայելու հատկությունն ալ ավելցուցած է. առի արդեն ծանոթ է ժողովրդին երբեմն «Եփրատ»-ի խմբագրությամբ ու կարճ միջոց մ'ալ «Մեղու»-ի խմբագրական օգնականությամբը:

«Մեղու»-ն սնուցիչությունը, խմբագրությունը, գործակալությունը, վերջապես ամեն մի նե-

դաժնան Պ. Լ. Պարոնյանի հանձնելովում է, մեզի վերադարձելով երբեմն աներ խմբագրութիւնը
օգնականութիւնը:

Ստանձնելով Մ. Նալբանդյանի տրտղիցիաների պաշտպանութիւնը մեծ ժողովրդականու-
թիւն վաշխող այնպիսի մի պարբերականի խմբագրութիւնը, ինչպիսին էր «Մեղուն», Լ. Պար-
ոնյանը շեշտակի պայտար է ծաղկում բուր տեսակի ցեցերի դեմ նրա խառնուող մարտի-
տակ են ընկնում իրերույ թերթերի խմբագիրները, դիմաւոր հազարականները՝ պատրիարքը,
թեմական առաջնորդ եպիսկոպոսները, կրօնական ժողովի անդամները, «Մեղուն» էջ-
բով Պարոնյանը բարձրացում է բարձրական ընտանիքների ներքին վիճակը թարցնող
խաղչաւ վարագույրները և ցայց տալիս այդ ընտանիքների սլլանդակութիւնները, բարոյական
այլաներումը, մարտիւնները:

Պարոնյանը պաշտահալ կյանքը արտայայտում է ղեղարկնատական մեծ ընդհանրացումներով
նրա երկերում երևում է հեղինակի լավ իրազնկութիւնը ոչ միայն շրջապատի քաղաքական-
կյանքի, ազգային ու կրօնական դործերի մանրամասներին, այլև թշուրթիայի արտաքին ու
ներքին քաղաքականութիւնը, միջազգային դիվանագիտութիւն մանկներին, երևում է նրա
խոր համարթիւնը համաշխարհային գրականութիւնն ու պատմագրութիւնն կլասիկ ներկայու-
ցուցիչներին, որոնց մտքերը, արտահայտութիւնները օգտագործել է իր բարձրացրած հարցերը
առաւել ճամուղի ու հասկանալի գարծնելու համար:

Պայքարի լայն հակաս բռնելով, Պարոնյանը իր վրա է հրաւիրում ամբողջ ռեսկցիոն հո-
սակրի թշնամութիւնը, այնպիսի մարդկանց ու հասարակական կազմակերպութիւններին,
որոնց թիկունքում կանգնած էին Պոլսի հայերի կրօնական կենտրոնը՝ պատրիարքարանը, սուլ-
թանական կառավարութիւնը, անգամ նմրոպական որոշ պետութիւններ՝ իրենց ղեկավանա-
տներով:

Սին հրապարակով մղված մարտերում նա հաղթանակով էր դուրս գալիս պայքարից՝
շնորհիվ իր երգիծական արտակարգ մեծ տաղանդի, բազմակողմանի զարգացման, որոնց
մտտ հակառակորդներն իրենց մտավոր կարողութիւնը պահանջներ էին, ապա նա չէր կարող
հաղթել իր թշնամիներին՝ կանխելով նրանց նենգ պայքարի միջոցները՝ ղրպարտութիւնը,
լրտեսագրերը, որոնց մեջ մեծ երգիծարանը ներկայացվում էր որպես հակակառավարական,
հակակրօնական գաղափարներ տարածող մի հրապարակախոս:

Սկսվում է ուժեղ հալածանք Պարոնյանի դեմ: Հազիվ մի քանի ամիս խմբագրած՝ թշնա-
միներին հաղողվում է կրկու ամսով փակել «Մեղուն»՝ պատրիարքի դեմ հրատարակած մի-
ծաղրանկարի համար:

Լ. Պարոնյանը, հրատարակելով տպագրական տեսչութիւն հրամանը, որով կրկու ամսով
դադարեցվում էր թերթը, գրում է մի սուր պամֆլետ՝ տպագրական տեսչութիւն և նրա տգիտ
պաշտոնյաների դեմ: Պայմանաժամի յրանալուց անմիջապէս հետո նա վերահրատարակում է
«Մեղուն» իրաւ լեզվով գրված մի առաջնորդող հոդվածով, որտեղ հարձակումներ դործելով
տպագրական տեսչութիւն վրա՝ բնթերցողներին մատնանիղ է անում նաև հայ յրտեսներին,
որոնց շաներով խափանվել էր «Մեղուն»:

«Մեղուն» վերջնական խափանումից հետո 1874—77 թթ., Լ. Պարոնյանը հրատարակում է
«Քատրոն» սյարբերականը:

«Քատրոն» լույս է տեսել ռուս-թուրքական պատերազմի նախօրեակին և պատերազմի
ընթացքում: Ռուսական զորքի հաղթական առաջխաղացումը մինչև Կ. Պոլսի դռները՝ կարճ
ժամանակով հնարավորութիւն և համարձակութիւն է տալիս հայ մամուլին, համեմատաբար
ազնի ազատ գրելու քաղաքական հարցերի մասին: Մի ամբողջ տասնամյակ արդիւնքիւնուց հե-
տո հնարավոր է դառնում հիշատակել Մ. Նալբանդյանի ակունք, խոսել նրա երկերի մասին,
երանցից կատարել մեքերումներ և առհասարակ նալբանդյանի գաղափարներն օգտագործել:

դեանցիցս զի դեմ մղվող պայքարում, մի քան, որից առաջին ճերթին օգտվում է Պարոնյանը՝ «Թատրոնի» 1876 թ. № 216-ում գրելով մի քաղաքական սուր հողմած ներքին և արտաքին հարստահարիչները դեմ, որպես նշանաբան ընտրելով Մ. Ասլանյանի «Մրկազորությունից» սկզբն կատուն, որ իր փորձի համար մուկ է բռնում արտահայտությունը:

Պարոնյանը «Թատրոնում» հրատարակում է մի շարք նշանավոր սոցիալիստիկական, որոնք հանգրսանում են նրա գլուխ-գործոց ստեղծագործությունները:

«Թատրոնի» էջերում է, որ նա իր քաղաքական սատիրայի ամբողջ ուժով մերկացնում է թյուրքական բռնապետական կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը, երկրում տիրող միջնադարյան խավարամտությունը, սկսական կամայականությունները, եվրոպական դիվանագիտության ստնձգությունները Մերձավոր Արևելքում, այդ ստնձգությունների աղետարեն հետևանքները հայ ժողովրդի համար և այլն:

«Թատրոնում» Պարոնյանը սկսում է մաս-մաս հրատարակել իր «Ազգային շոշեր» պորտրետները:

«Ազգային շոշեր» Պարոնյանի քաղաքական սատիրայի գագաթն է: Այնտեղ նա խտացրել է իր երգիծական տաղանդի ամբողջ ուժը, գաղափարական նորարարականությունը:

Եթե «Թատրոնում» սպազմված այլ ժանրերի ստեղծագործություններում նա գերազանցապես մերկացրել է սուլթանական թյուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությունը, եվրոպական պետությունների ստնձգությունները Մերձավոր Արևելքում, ապա «Ազգային շոշերում» նրա գրչի կիզակնուր հիմնականում ներքին շահագործողներն են: «Ազգային շոշերում» Հ. Պարոնյանի քաղաքական սատիրան հանդես է գալիս սերտ կերպով միացած նրա սոցիալական սատիրայի հետ:

«Ազգային շոշեր»-ը, անհատ հասարակական գործիչների երգիծական պորտրետները լինելով, հանդիսանում են Պարոնյանի ապրած և ստեղծագործած էպոխայի լավագույն արտացոլումը: Ճարքեր մարդկանց կենսագրական մանրամասների մեջ հանճարեղ երգիծարանը խտացրել է էպոխայի տիպական հատկանիշները: Այդ կենսագրություններում սուր, անխնա քննադատության են ենթարկվում հոգևորական իշխանությունները, բուրժուական ժախտ մամուլը, շահամուտ խաբեքա «ազգայինները», ազդեցության ու խաղաղի մեջ խարխափող թյուրքիայի ներքին վիճակը:

Հ. Պարոնյանը «Ազգային շոշերում» մեկ առ մեկ հրատարակել վրա է դնում տղետ, փսուսում, երկերեսանի, քննող ու շոշորթող այն հոգևորականներին, որոնց համար ոսկյա պատվանդաններ, փառքի կոթողներ էին ստեղծել չեքերալ մամուլի ու գրողները:

Պարոնյանը անխնա մերկացրել է ոչ միայն ժամանակի պահպանողական վերնախավի պատկանող ազգային «շոշերի» հակաժողովրդական էությունը (Խ. Նարբեյ, Տերոյենց և Երիշենը), այլև չեքերալ ինտելիգենցիայի ականավոր ներկայացուցիչների գաղափարների ու պրակտիկ գործունեության հակասությունը (Կ. Աբուլջյան, Ստ. Փարիսյան և ուրիշներ):

1876—78 թթ. Պարոնյանը միաժամանակ հրատարակում է «Թատրոն» մանկանց պատկերազարդ սյարքերականը, օգտակար գիտելիքներով ու մաքուր տպված նկարներով: Հստակության, գա առաջին հրատարակությունն էր արևմտահայ իրականության մեջ, որը տպագրում էր մանկական ընթերցանության նյութեր:

Ներքին և արտաքին շահագործողների դեմ ծավալվող այս խիզախ մարտնչումները Պարոնյանը կատարում է քաղաքական խստագույն հաշտանքների, մատնությունների պայմաններում, որոնց հետևանքով «Թատրոն» հաճախ փակվում է ու մեծ դժվարություններով նորից հրատարակվում:

Պարոնյանի «Թատրոն» պարբերականը ենթարկվում է նույն հաշտանքին, ինչ որ «ԱՅ»-

շուքաւ իր ծաղրած սազգային տոբերիս մատնութիւններն հետեանքով շորս սարգա ընթացրում
այն փակվում է ութ անգամ՝ իմրագրին պատնառելով նշուքական ծանր վնասներ:

«Թաւարոնիս մեջ ոչ թե նախարարի մը, այլ օտանիի մը դեմ եթէ նրկու խոսք ընեի.—
գրում է Պարոնյանը,— իսկույն ամիս մը կ'զոտայեցնէին թաւարներ, իսկ եթէ թիչ մը ծանր կոխուի,
կ'հատվանէին զուշն»:

1875 թ. նոյեմբեր ամսին լիբիբուլ «Մասիս» սոցազրում է շուքիւր Հայաստանում թշուր
բարբարոսների կատարած սհրագործութիւնների և թալանի մասին, սակայն սոցազրում է
միջոց զիջումներ, ունեւաններ անելով սուլթանին, փորձելով ամեն կերպ սիրաշահել սրաթի-
խնամա կառավարութիւնը:

Պարոնյանը, ցանկանալով իրեն հասուել խիզախութիւնը և սկզբունքայնութիւնը բարձրաց-
նել այլ հարցը, զուգանից սուսցված նման մի սրտաճմիրկ շուք հրատարակում է սե շրանակի
մեջ, որպես մահուղ զավառում զոնված այդ հաղարարի հայերի համար: Նա այդ շուքին
կցած հոգնածում գրում է. «Երկուր Տոպագրական տեսութիւնը կենրե՝ մեզ այս անշուք
վալրենութիւնը, բարբարոսութիւնը ու դազանութիւնը սակ հեծեծող միւր եղարաց կականա-
թարձ հասարակաց արձագանք տալու նա միաժամանակ գրում է, որ հայերի վրա ծան-
րացած բարբարոսական շուքը «հաւատակութիւնը քլլալի դազրած, գերութիւն շուք եղած էս, սե
որ հաւ ժողովուրդը իր անիւ և ինչքի ազատութիւնը, կլանքի ազահոգութիւնը» թշուրքական
կառավարութիւնից պահանջում է ոչ թե սիրիւ շուք, այլ իրիւ իրեն (թշուրքական կառա-
վարութիւն) սարտըր»:

Ինչ խոսք, որ Պարոնյանը այս համարձակ տողերը գրելիս արգին եկատի է ունիցել, որ
«Թաւարոնը» անպայման խաղաղվելու է: Հենց հաջորդ օրը նա ստանում է սոցազրական տե-
լութիւն պաշտոնական ծանուցագիր-կարգադրութիւնը թերթի խափանման մասին:

Պայմանաժամը լրանալուց հետո Պարոնյանը անցնում է հարձակման: Յուրց տալու հա-
մար, թե թշուրքիայում ինչպես արգելված է ամեն մի ազատ խոսք, նա հրատարակում է իր
բարեկամներից մեկի ցավակցական նամակը՝ «Թաւարոնի» խափանման առթիվ գրված, կախ-
ման կետեր դնելով այն բոլոր նախադասութիւնների, քառերի փոխարեն, որոնք կարող էին
արգելվել կրարենութիւն կողմից: Ստացվում է մի նամակ, որտեղ բացի «թեպակուս», սրայցը,
«իմիւր համար», «որովհետեւ և այլ նման մի քանի կցկտուր բառերից ուրիշ ոչինչ չկա: Նա-
մակի այդպես աղճատված, զնշված ձևով հրատարակվելը շատ ավելի ազգու էր, դիպուկ-
ուշիւացնող, քան հսկակատարութիւն մի ամբողջ հոգնած»:

Նման մի քանի այլ նշութիւն պահանջով «Թաւարոնը» փակվում է քիչմիշու:

Մեծ երգիծարանի հակառակորդները հասնում են իրենց նպատակին: Պարոնյանը մի քանի
տարի զրկվում է սեփական թերթ ունենալու հնարավորութիւնից:

«Թաւարոնը» փակվելուց 6 ամիս հետո, 1878 թ. փետրվարի կեսերին, Պարոնյանը «Մասիս»
թերթում սկսում է հրատարակել իր «Եւամբներ» շարքը: Մի կնու: ոտաշարանով նա ըն-
թերցողներին հայտնում է, որ իր 6 ամսվա լուրթիւն պատճառը ցնկուրակուս արգելքների
են, այն, որ կառավարութիւնը կողմից «խնդար» նախաշխարհ է «հասարակաց բարբարոսութիւն»
համար վնասակար»:

«Մասիսում» Պարոնյանը շարունակում է մերկացնել եվրոպական գիմանագիտութիւնը,
եվրոպական մեծ պետութիւնների դեպարտմենտի ինտրիգները, փոքր ժողովուրդներին, այդ
թիւում հայերին, սարկացնելու նրանց ծրագիրը:

Նա սուր քննադատութիւն է ենթարկում նաև սուլթանական կառավարութիւնը բարբարո-
սական քաղաքականութիւնը, հանգեցով այն արդար դատաւնին, թե քանտարկվելու արժանի
ոհրագործներն ու մարգասպաններն են, որ տիրապետում են սլխաստաւոր հանց ժողովրդի վրա:

«Մասիս» թերթի լիբիբուլ խմբագիր Կ. Ռեթուճյանի նպատակը եղել է իր տաղտկալի թեր-

Քում Պարոնյանի երկերը ապագրելով՝ հետաքրքիր դարձնել այն, ընթերցողներ վաստակել։ Մակայն Պարոնյանի երգիծական հորվածների բերելիք անախորժ անակնկալները, թերթի փակվելու վտանգը ավելի ծանր համարելով, քան նյութական օգուտը, մեթուճյանը փակում է Վեֆախիս գոտերը այդ «վտանգավոր» մարդու առաջ։

Մինչև 1878 թ. մարտի 5-ը Վեֆախիսն աշխատակցելուց հետո Պարոնյանը դարձյալ դուրս է մնում լրագրական սուպրենտենդենտի և հարկադրված է չինում աշխատակցել մի շարք թերթերի՝ Վեֆախիսի էֆքյարն, «Ճերիանի շարքին», «Լույս», «Հայրենիք» և այլն։ Լիթերալ այդ թերթերը, որոնք նախորդ տարիներին սուր ծաղրի էին ենթարկվել «Վեֆախիս» և «Քատրու-նում», չէին կարող թույլ տալ, որ Պարոնյանը ազատ գրեր, ինչ որ ցանկանալու էր թերթերի ուղղությունը հարազատ չէր Պարոնյանի գեմակրատական աշխարհայացքին։ Նա այդ պարբերականների մեջ հարկադրված էր սպառել այնպիսի նյութեր, որոնք ուղղված չէին ազգային իշխանությունների կամ կառավարական սուպրենտենդենտների դեմ և գերազանցապես շոշափում էին կենցաղային հարցեր, բառերի տեսարաններ։ Բայց այդ, կան վկայություններ, որ նրա գործերը լույս էին տեսնում խմբագրական մեծ կրճատումներով և ուղղումներով, որոնք հարկադրում են իր սկզբունքներին հավատարիմ գրողին՝ թողնել և հեռանալ այդ պարբերականներից, որոնք սպառվելու այլ հնարավորություններ

1879 թ. Պարոնյանը ծրագրում է ժամանակի ղեկավար մարդկանց մասին «Քատրունում» և «Լույսում» սպառ իր երգիծական պարտերները հրատարակել առանձին գրքով։ Նա լույս է ընծայում այդ ծագվածուի առաջին հատորը՝ վերնագրելով «Ազգային շուքեր»։ Հատորում տեղ են դրվում 10 պորտրե, այդ թվում՝ հեղինակի գլուխ-գործոցներից «Երոնի Գուլֆայանը», «Լավանեսու Տերյանցը», «Անտոն Հատունյանը» և ուրիշներ։

Հաջորդ տարում նա հրատարակում է «Ազգային շուքեր» Բ. մասը, որտեղ նույնպես զետեղում է 10 երգիծական պորտրե։

Նույն 1880 թ. Պարոնյանը ձեռնարկում է «Ազգային շուքեր» Գ. հատորի սպառութայինը, սակայն հազիվ է կարողանում լույս ընծայել 3 պորտ (ընդամենը 48 էջանոց մի պրակ) և ընդհատում է, ամենայն հավանականությամբ, ոչ այնքան նյութական, որքան քաղաքական արգելքների հետևանքով։

Քյուրքիայի քաղաքական կյանքում այդ երկու տարիներին տեղի են տեսնում խոշոր փոփոխություններ։

Քյուրքիական կառավարությունը խոտանում է հույժաների և հույժանի նկատմամբ։ Սուլթան Համիդի անիշխան հրահանգներով դավաճանում միտում են կոստրել հայ խաղաղ բնակչությանը։ Մայրաքաղաքում սկսվում է ուժեղ հալածանք անգամ սուլթանի ղեկի հետ լեզու գտնելու ձգտող շրջանում մամուլի ու հրատարակությունների դեմ։ Արգելվում է պատմական ողբերգությունների քննադրությունը, փակվում է սահմանափակ հայ թատրոնը և Պոլսի սկսած նախորդ հայ արտիստները Պ. Աղամյանի գլխավորությամբ դաշիս են կազմում՝ անհամակուտ ազատ պայմաններում շարունակելու իրենց թատերական գործը։

Հասկո՛ւնայի է, որ քաղաքական նման պայմաններում դժվար էր այնպիսի մի գեմակրատ մասնագի գրական գործունեությունը, ինչպիսին էր Շ. Պարոնյանը։ Նա ոչ միայն հետադարձ-վյուսն չի ունենում շարունակելու և ամբողջացնելու «Ազգային շուքեր», այլև ազատ կերպով սպառելու իր թեկուզ կենցաղային բնույթի գործերը։

Պարոնյանը գրել է. «Արագիբներն երկար տարիներ ի վեր մեկ-մեկ պարահանդեսներ դարձում են, հին գիմակով ալ կրեդալներն, առանց գիմակի ալ, իսկ ես կզարմանամ, թե ճշմարտությունը խոսելու համար ինչու ամչնա մարդ և երեսը գիմակ անցնելու հարկադրվի»։

Զնայած այս համոզման, Շ. Պարոնյանը հայ գրողների մեջ այն քաղաքակ դեմքն է, որ

ամենից շատ է հանդես եկել դիմակով, այսինքն՝ ժածկահաններով, որոնց թիվը մի քանի տասնյակի կարող է հասնել:

Ինչպես Պուշի առաջավոր հաջ ինտելիգենցիայի ճնշող մեծամասնությունը, Պարոնյանը եռյակիս իր ակնարկը հատում է դեպի Կովկաս: Նա բնականաբար չէր կարող աշխատակցել «Մշակին», որի խմբագրին այնքան սուր քննադատության էր ենթարկել սկզբային շոքերում: Նախընտրում է գրել «Փարձում», որի խմբագիր Ս. Հովհաննիսյանը ձգտում էր իր շուրջը համախմբել ժամանակի պրոգրեսիվ գրողներին, սպագրում էր Պ. Պոսոյանի, Նետադայում Ի. Լուսուզելյանի, Բաֆֆու և ուրիշների երկերը:

Պարոնյանը Ա. Հովհաննիսյանի «Փարձում» 1880 թ. մաս-մաս հրատարակում է իր սեմ՝ ձեռատետրը՝ նշանավոր աշխատությունը Հոս-հոս սատրապությանը, որը Նետադայում քանիցս վերահրատարակվել է «Հոս-հոսի» ձեռատետրը՝ վերնագրով: Այդ աշխատության մեջ ըստ էության փորձում է շարունակել այն պայքարը, որ սկսել էր «Մասխում» «Լուսիններ» քննադատական գրողներով: Թե՛ ժանրային տեսակետից և թե՛ իրենց արժանիքով հարցերով, երգիծական պրիմաներով «Ձեռատետրի» նյութերը կազմում են «Լուսիններ» շարունակությունը: «Ձեռատետր» Պարոնյանի պարած ժամանակաշրջանի տարեգրությունն է, որտեղ արձանագրված են ոչ միայն պոլաճայ իրականությունը հուզող հարցերը, այլև միջազգային քաղաքական կյանքին վերաբերող շատ խնդիրներ: Օրը-օրին գրված այդ խրոնիկաների մեջ անշուշտ կան սովորական լրագրային հաղորդումներ, զուրկ երգիծական արձանիքից, սակայն գրանց թիվը շատ քիչ է:

Սուլթանական թյուրքիայից դուրս, ժածկահանով սպագրվելու հանգամանքը հնարավորություն է տվել Պարոնյանին արևմտեվրոպական պետություններին, թյուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականության մասին հանած իր եզրակացությունների մեջ չիսկ ազնվի որոշակի, հստակ և անողորմ:

Կ. Պուշում սպագրած իր ոչ մի աշխատության մեջ Պարոնյանը սուլթանական կարգերի նկատմամբ այնպիսի համարձակ եզրակացությունների չի հանդել, որքան «Հոս-հոսի» ձեռատետրում:

Կարճ ժամանակ միայն աշխատակցելով «Փարձին», Պարոնյանը ընդհատում է իր այնքան արժեքավոր թղթակցությունները:

Ինչպես ասվեց, թյուրքական բնապետությունը անցել էր ստեժարձակ հալածանքի Պարոնյանը Կ. Պուշի թերթերում հնարավորություն չունեի ազատ գրելու: Նա, իմանալով հանդերձ Հարժայր Մանրյանցի ռեակցիոն գաղափարների մասին, առաջարկում է աշխատակցել նրա խմբագրությանը Մոսկվայում լույս տեսնող «Փարոս Հայաստանի» պարբերականին:

Պարոնյանը ցանկանում էր ամբիոն ձեռք բերել և փորձել գրելու իր ցանկացած նյութերի մասին. դա երևում է այն մի քանի թղթակցություններից, որ նա հրատարակել է «Փարոս Հայաստանի» պարբերականում «Լուսարար» ստորագրությամբ: Դրանք Պարոնյանի երգիծական-սառսնգության, նրա քաղաքական սատիրայի լավագույն էջերից են: Միաժամանակ այդտեղ է, որ Հ. Պարոնյանը, անդրադառնալով աշխարհաբարի և գրաբարի պայքարին Նալբանդյանական-դիրքերից, դիակ է հռչակում գրաբարը և աշխարհաբարի մեջ է տեսնում նոր լեզվի զարգացման հեռանկարը:

«Լուսարարի» եամակներից» հուզիվ չույ թղթակցություն հրատարակած՝ Մանրյանցը ընդհատում է Պարոնյանի երկերի սպագրությունը, երգիծարանից ստացված վերջին թղթակցությունը գցելով արխիվ: Ծարիներ անց միայն այդ աշխատությունը լույս է տեսնում «Հանդիս-գրականական և պատմական» պարբերականի 5-րդ գրքում, խմբագրի՝ Մ. Բարխուդարյանի, միջանդիտությունով, որտեղ ասվում է, թե այդ նյութը ստացվել է Մանրյանցից:

1881—1885 թթ., այսինքն՝ ուղիղ 4 տարի, Հ. Պարոնյանը եղել է ազգային ժողովի երևույթիսան, ընտրվելով իր ծննդավայրից՝ Ադրիանուպոլիսից:

Աղջակին ժողովը մի վայր էր, որը, ինչպես Պարոնյանն էր նույն օրերին գրում, կազում էր երկու ոտով և որն է հարց լուծելու կարողությունն շուներ: Պարոնյանը չէր կարող մասնակցել այդ ժողովի աֆի շաղակրատումներին, որոնց այնքան սրամիտ կերպով ծաղրել էր ըստ մտքի առիթներով:

Այդ շրջանում է, որ մամուլում յայտ է տեսնում Հ. Պարոնյանի անմահ սովորագործություններից «Մեծապատիվ մուրացկանները»:

«Մեծապատիվ մուրացկանները» ըստ էության ընդհանրացումն ու զեղարկուսական ամբողջացումն էր հասարակական կյանքի այն քննադրումների, որոնց ընթերցողը կարող է հանդիպել Պարոնյանի նախորդ տարիների շատ ստեղծագործություններում:

«Մեծապատիվ մուրացկանները» աչքի է ընկնում որպես հայ քննադատական ուսուցիչի ամենանշանակալի նմուշներից մեկը, որտեղ հանգու է եկել քննադատություններ, տիպեր կերտուցու, միջավայր ներկայացնելու հեղինակի խոշոր տաղանդը: «Մեծապատիվ մուրացկանները» գլխավոր հերոս Արիստոսը ազան, Մանուկ տղան, անմուսա քանաստեղծը, խմբագիրը և շատ այլ գործող անձեր ամենամասնաշաղկապ կերպարներ են հայ գրականության պատկերասրահում:

Վիպակի գրական խոշոր արժանիքներով պետք է բացատրել այն փաստը, որ «Մեծապատիվ մուրացկանները» ունեցել է ավելի քան 10 հրատարակություն և թարգմանվել է մի շարք լեզուներով, բնագործի է հույ թատրոնում երկար ժամանակ:



Հ. Պարոնյանը ծրագրում է Կ. Պոլսում մի նոր երգիծովերթ հրատարակել, սակայն մամուլի վրա դրված կաշկանդումներն այնպիսի արտաոտջ խտությունների էին հասել, որ բացարձակապես անհնար է դառնում քննադատել ոչ միայն պետական պաշտոնյաներին, այլև ազգային իշխանություններին:

Նման պայմաններում նա չէր կարող իր սուր քաղաքական երգիծանքը հակառակ անվանն ուղղել վերահիշյալ մարդկանց դեմ: Նա մտածում է պայքարի նոր միջոցներ գտնելու մասին: Արդյունք է հասարակական կյանքի արտաոտջը կողմերը քննադատել եզոպոսյան չիզվով:

Այս պայմաններում է, որ 1883 թ. սկզբից հանդես է գալիս նրա «Միծաղը», որը լույս է տեսել առանձին պրակներով, ամեն շաբաթ՝ որպես բրոշյուր:

Հ. Պարոնյանը իր «Միծաղի» առաջին տետրակի առաջաբանում անդրադառնելով քաղաքական անկասար պայմաններին՝ գրում է.

«Ենթկա գործն պիտի խոսի կենդանիներուն վրա, ի ըստ առնելով միայն այն կենդանին, որուն մարդ կըսնն տասնեփնկերորդ դարուս մեջ»:

Ինքին կհասկցվի, որքան, թե դուրսազներուս խումբը պիտի կազմվի կատվն, գորտն, կապիկն, սողնակն, գայլն, էջն, սալն, բազն և վերջապես այն ամեն կենդանիներն, որոնց մարդ չեն ըսեր»:

Եվ ուրա, հասկացնելով, որ այդ կենդանիների անվան տակ ընթերցողները դարձյալ պիտի տեսնեն Կ. Պոլսի հայ հասարակական կյանքում իշխող դեր կատարող ազգային ջոջերին, Պարոնյանը շարունակում է.

«Փիչն հազած կուպիկներ, առաջնորդության թկնածու ազուվներ, իրենց անձն ուղղության օրինակ հաշակող ուղտեր, ներդաշնակության ճաշակ տարածող ամանակներ, պանիրի պահպանության համար իրենց ղիբներ բնորեյի ներկայող կատուներ և այլն ի տես պիտի դան և իրենց դերերն պիտի կատարեն «Միծաղի» ասպարեզին մեջ»:

Այսօր, 70 տարի անց, Պարոնյանի այդ նոր ժամերի սահմանափակումը անհնար է հասկանալ առանց ամենամանրամասն ժամօրագրութեանը։ Այս կոմենտարներին ժամանակաշրջանի հասարակական-բողոքական կյանքին չիլ թն շատ ծանոթ ընթերցողը, ուսկայն, կնկատի թնամատիկայի այն բազմազանութեանը, տարբեր բնագավառների ընդգրկումը, որը ինչպէս Պարոնյանի նախորդ շրջանի բոլոր աշխատութեաններում, այնպես էլ «Միծաղում» առկա է։ Այնտեղ ամենատարբերանաբանութեան ու մեղակցումների են ենթարկում հայ ժողովրդի բախտի հետ խաղաղու շայ բարձրակարգ գործիչները, լիբերալ մամուլը իր խմբագիրներով, պատրիարքարարներ իր բարձրաստիճան հողերականներով, սուլթանական կառավարութեանը իր պաշտոնյաններով, նվարտական գաղտնիարարներն իրենց գիւղումատիկական խաղերով։ Այս բոլորը ներկայացվում են ոչ թն իրենց կոնկրետ ստեղծաներով ու անուններով, այլ առակի ժամերին հատուկ կենդանական աշխարհի օգտագործմամբ։ Բազմազան և բազմաթիւ կենդանիների միջոցով Պարոնյանը ներկայացրել է իր ժամանակաշրջանի բոլոր նշանավոր մարդկանց և գործիչներին։ «Միծաղում» հրատարակված ուարիներին օրը-օրին հասկացվել է, թն ումն է ակնարկում հեղինակը այս կամ այն կենդանու արարքները ընդգրկանելու։

Նույնիսկ այդպիսի միջոցներով ըկարողանալով շարունակել «Միծաղում», Պարոնյանը հարկադրված է լինում այն գաղտնիցնել ընդամենը մի բանի ամիս հրատարակելուց հետո, 1883 թ. դարեանը։

Ավելի քան 6 ամիս լրագրական ասպարեւից հետո մնալուց հետո Պարոնյանին մեծ գովարտութեամբ հաղովում է մի նոր նրդիծաթերթ հրատարակելու թուղտվութեան ձեռք թերելու 1884 թ. հունվարի 30-ից բայ է ընծայում «Երկարք»։

«Երկարք» հատարակութեանը ներկայացնող «Երկու տող» ասուղնորգուամ Պարոնյանը գրել է.

«Անաշին անգամն ըկ, որ պատիվ կունենամ երևալու խմբագրական ասպարեւին վրա, որուն քառասուն անգամ ողջունն և նույնքան հրածնչտ աված ևմ, ուստի ավելորդ կհամարիմ վերատին հայտնել տատ այն սողութեանն և ընթացքը, որուն հետեւած ևմ ցարդ և զոր լրանելու զորավոր պատճառ մը շունիմ, որովհետեւ ողջամտութեանն, անկեղծութեանն և անուշտ դատատանն տակավին ընմ զաներ ևս այնքան զղվելի և այնքան գարշելի, որքան կկարծվի խմբագրաց և գրագիտաց ունեցալ»։

Չնայած այս պեղնախոս գեկլարուցիւղին, Պարոնյանը «Երկարքում» հարկադրված է լինում շատ ավելի ընտանական, կենցաղային հարցեր շոշախել, քան քաղաքական։ «Երկարք» էրբը լընում է Պարոնյանը անծամբ, գերագանցուկեւ սառանին տեսարաններո ցուցադրելով։ Այդ նյութերի զգայի մասը լրագրական սովորական հոլվածներ են, զուրկ նրդիծական այն հզոր ընչից, որով հագնցված էին «Մեղվում», մանավանց «Թատրոնում» տպագրված նյութերի էեծ մասը։

Ինքը՝ Հ. Պարոնյանը ուղադրով խոստովանութեան ունի այս մասին։ Պատասխանելով իր այն ընթերցողներին, որոնք դժգոհութեան են հայտնել «Երկարք» բովանդակութեանից, նա գրում է.

«Մական պահանջել իրմն (այսինքն՝ «Երկարքից»), որ խոսի այն լիզվում, որով կխոսեր նրդեմն «Մեղուի», «Թատրոնի», «Նույսի» և ազգային ուրիշ լրագրաց մել, անկարելին պահանջել է, որովհետեւ «Երկարքի» ձեռագրերն գրաքննական բովեն անցնելն հետո կհանձնվի մամուլ Այսքան բացատրութեան քով կհամարինք պատասխանելու համար այն դիտողութեանց, որ ուղղվեցան մեզ «Երկարքի» անցյալ շրջանի պարունակութեանց մասին»։


1886 թ. «Երկարքում» սկսվում է տպագրվել Պարոնյանի «Պաղատասար աղբար» անմահ կոմեդիան։

«Եկեաքում» 2. Պարոնչանք սպազրում (նաև իր կարևոր աշխատութուններից «Քաղաքացիական զննանքը» և այլ գործեր:

Ըստ էութան այս բուրբ մեջ արծարծում էր նույն հիմնական հարցը, այն, որ բազմաթիվության, քաղաքացիության բողի տակ նախ իրականութուն էին մտադ գտնում այնպիսի բարքեր, որոնք ապականում էին կյանքը, այլանբում մտրդկանց:

Ճնայած այն հանգամանքին, որ «Եկեաքում» չէր շարժում բազարական խնդիրներ, զհուշանում էր անգամ պատրիարքարանի հետ կապված նարքեր բարձրացնելուց, այնուամենայնիվ այն ենթարկվում է բազմաթիվ խախտումների և 1888 թ. վերջնականապես փակվում է:

«Եկեաքից» հետո, 2. Պարոնչանք այլևս նաքադորություն չի սեկնում գրադվելու խրմբայական աշխատանքով:



Եմբարդական աշխատանքին կուզենիաց, 2. Պարոնչանք կուտարի է գտնողան աշխատանքներ՝ իր բազմանգամ ընտանիքի ապրուստն սպաճովելու համար: Նա միշտ ապրել է նշաթական ծանր պայմաններում: Իր ստեղծագործութուններով բնիկրդակներին չիսթոր ծիծաղ պատճառող մեծ երդիծարանը կյանքում եղել է լուսկյաց, թախծուտ ու մտածկուտ մի մարդ:

Պարոնչանք իր ամբողջ կյանքի ընթացքում ասել է հարուստներին: Միակ գրողն է ամբողջ արևմտահայ գրականության մեջ, որ երբևր խուսկ չի ծխել նարուստների առաջ, միշտ մտու է եղել այդ միջավայրից: Նա խուտափել է թմծատուններից, երբևր իր սրամտութունները շող չի տվել հարուստների նոխ սեղանների վրա: Նրա միջավայրը, տարերրը եղել է արևուտադորների, պանդուխտ դասի շրջակայուր, եղել է նրանց այցելած որճարուններում, որոնց ամբողջ կանադորումն էր՝ գինու շշեր, բողի սրվակներ, մեկ կույմ նաչի սեղաններ, որոնց սրա շարված էին ձեթով կերակուրներ:

«Մխաթուտի մուրը, ուտելիքներուն արտակարգ բուրուճը, բմակլիցներուն հուր կհարինեին մինուրառ մը, ուր շեշելը շատ դժվարին էր անվարմներուն նոն կհանդիպելինք Պարոնչանին, որ ինքզինքն սմենելին օտարուտի չէր զգար այդ մինուրափին միդ: Իր գրություններուն շափախործելի էր իր ընկերակցությունը:

Նա իր սրամիտ դիտողություններով դրադեցրել, ծիծաղեցրել է բուրբին, ինրը միայով ախար, թախծուտ, միշտ վշտի արտահայտությունը դեմքին:

«Ընդհանրապես արտում, տխուր, հուտահատական կերպարանը մը ուներ,— գրում է իր հուշերում Ա. Արմիրարյանը,— ամեն անգամ, որ զինքը կտեսնեի, կկարծելի թե այն օրը մեծ վիշտ մը ունի, կամ սնհաշղություն մը: Բայց ոչ, իր բնադորությունն էր, ներքին ցասկոտություն մը ուներ»:

Հոգեկան այցպխի ծանր վիեակում նա իր կյանքի վերջին տարիներին շարունակում էր գրադվել հաշվապահական տադակայի ու հոգեմաշ գործով, որպեսզի կարողանա սպաճովել իր ընտանիքի ապրուսադը: Ոչ Թյուրքիայում և ոչ էլ արևելահայ իրականության մեջ 80-ական թվականներին վերջերին չկար որեկ զեմուկրատական մամուլ, որտեղ նա կարողանար գրել զեթ իմբարդական կաշկանդումներից սղատու Այդ է պատճառը, որ երբ նրան խորհուրդ են տալիս աշխատակցելու Տ. Նաղարյանցի «Տարադին», նրան ամենից առաջ հետաքրքրում է 1890 թ. հրատարակվելիք այդ պարբերականի գաղափարական ուղղությունը և հետո այն, թե ամա-

պէս զանի՝ էջ պետք է գրի, որպէսզի նվազագույն մի վարձատրութիւնս կարողանա թեթեւ-
եկել իր նշանակեալ ծանր վիճակը: Եւ Տ. Եւզարչանցին հասցեագրած նամակում գրում է.

«Ես պատրաստ եմ Ձեր թերթին աշխատակցելու, միայն թե կիսնդրեմ ինձի հաղորդք նստի
թերթը ինչ ուղղութիւն կապակտնի և երկրորդ որչափ թերթ հարկ է գրել, որպէսզի ամսական
քսան ուսուցի ստանալ կարելի ըլլառ:

«Տարագումս մենք Պարոնյանի գործերին շնք հանդիպում. Ամենայն հավանականութիւնս
այդ թվականից ծանրացող թորախտը հնարավորութիւն չի տվել նրան նշուիթեր ուղարկելու Տ.
Եւզարչանցին: Բանն այն է, որ հենց 1890 թ. սկզբից նա ընկնում է անկողին ու օրեցօր
հշուժվում, քայքայվում տեսնական ամենածանր պայմաններում:

Ժամանակակիցները ամենատխուր ու ցնցող տողերով են նկարագրել նրա կյանքի վերջին
տարիները: Եկիկարիս շվաճառված համարները՝ միակ հարստութիւնը, թիկ տակ, նա դռնն դուռ
ման է եկել, որպէսզի դրանք դիմ կես գնով վաճառի և ստացած գումարը հատկացնի
քուժման:

Թիֆլիսի սերժանտներն թերթի թղթակիցը Պարոնյանի մահվան օրերին գրում է. «Մի երկու
ամիս առաջ տեսա նրան. անձանաշնչի էր դառել: Բժշկի մուտից էր վերագառնում, դեղագիրը
ձեռքին, առանց դեղի...»:

Պարոնյանի հակառակորդները՝ այդ բոլոր ազգային շողերը, ալիպային երեսփոխանական
ժողովի տղեպատասանները, պատրիարքարանի պաշտոնյաները, որոնք ամբողջ քառորդ դար
անխնա ծաղրվել էին նրա նրկներում, ոչ միայն հետու էին հիմանդ երգիծարանին օգնելու:
Մտքից, այլև դիվային տեսարթերութիւնս էին դիտում այդպիսի խաշոր մի տաղանդի օրեցօր
հշուժվելն ու խամրելը:

Մի առ ժամանակ հիվանդանոցում ամենածանր պայմաններում տառապելուց հետո, 1891 թ.
մայիսի 27-ին մեռնում է հայ մեծագույն երգիծարան, Վեզրային շողերիս անմահ հեղինակ
Հակոբ Պարոնյանը:

II

2. Պարոնյանը գրական ապարեզ էր մտնում այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ
արևմտահայ հասարակական կյանքում տեղի էին ունենում զգալի տեղաշարժներ: Հետամնաց
ուղղա-հեռոգրական Թյուրքիայում սկսում էին զարգանալ կապիտալիստական հարաբերու-
թիւնները:

Ճեղգալական-ամիրայական շահագործումը փոխարինվում էր բուրժուական-առևտրա-վաշ-
խառուական կեղեքումով:

Այդ մի ժամանակաշրջան էր, երբ մարդկային վեհ ու ազնիվ ձգտումները տեղի էին տվել
փողի քաջարժան գերիշխանութիւնը: Եկին դարուն մեք,— գրում է Պարոնյանը,— ուր մենք
մեռնեկու կաշխատիւնք, ամեն քան դրամով կցնվիս, փողը, հարստութիւնն է ամեն ինչի շա-
փանիշը, և էլ մը ունեցողն ավելի պատիվ և մեծարանք կվայելն, քան այն, որ հանձար ունիս:

«Մշմարտութիւնը դազադին մեք է դրվածս, սողաժտութիւնն ու անաշառութիւնը քնել
ենս, քանկեղծութիւնը անցել է հանցանքներուն ցանկին մեքս, քաղաքավարութիւնը և շող-
քորթութիւնը դարձել են նույնանիշ քաւերս, քանմեղութիւնը ոճիր մ'էս: Բոլոր ազնիվ զգաց-
մունքներին փոխարինել է կեղծիքը, խարդախութիւնն ու խաբեքայութիւնը: «Կաթնազանաւորին
դպագարեմ, որ ինձի կաթ րնքն և անիկա կաթի տեղ շուք կրնքն, ոսկեղեն դարուն մեք կաթին
մեք քիլ մը շուք կը խառնեն, տաւնեխներորդ դարուն՝ մեք շուրին մեք քիլ մը կաթ կխառնենս»

Ապահանջած բարքերը մահանցում են ընտանեկան հարաբերությունների մեջ: Ընտանիքներում աստիճանաբար վերանում է փոխադարձ սիրո, հարգանքի վրա խաղաղված ամուսնական միությունը: «Երիտասարդներն շատերը նրբ կին մը առնել ուզեն, այնպես կվարվին, ինչպես կվարվիմ ես, երբ կով մը կամ ձի մը առնել ուզեմ»:

Հակառակ լիբերալ բուրժուազիայի մուրեկները ագիտացիային, դեմոկրատական գաղափարներով տոգորված ինտելիգենցիան, համախոսքված Լ. Մվանյանի «Մեղվի» շուրջը, լայն ճակատով պայքար էր մղում սահմանադրական իլյուզիաների դեմ, առաջ քաշելով սոցիալական և քաղաքական պայքարի հարցերը:

Ծթե արևելահայ գրականության մեջ քննադատական ունիթզմը սկսվել էր դեռևս 40-ական թվականներին, ե. Արուստանի անմահ «Էներք Հայաստանի» վեպով, 60-ական թվականներին այդ ունիթզմը ասրել էր իր զարգացումը Մ. Նալբանդյանի «Մեծուհարցուկ», Գ. Տեր-Հովհաննեսյանի «Տեր Սարգիս», Պ. Պոռչյանի «Սոս և Վարդիթեր» վեպերի հանդես գալով, և իշխող գրական ուղղություն (ը գարնել Գ. Մունդուկյանի ունիթատական դրամատուրգիայի բնվ բարձրանալով, այս արևմտահայ իրականության մեջ գրական այդ պրոցեսն սկսվում է շատ ուշ:

Լ. Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան», «Շողոքորթը» և այլ կամեդիաները ըստ էության հանդիսանում են քննադատական ունիթզմի առաջին փորձերը արևմտահայ իրականության մեջ: Այդ կամեդիաներում է, որ առաջին անգամ գրականության նյութ էին դառնում հասարակական կյանքի ցավոտ կողմերը:

Պարոնյանի առաջին տպագրված գործը՝ «Ատամնաբույժն արևելյան» կամեդիան, ցուցադրում է մեղանական կյանքի մի շարք բնորոշ կողմերը:

Պարոնյանի «Շողոքորթը» արտացոլում է բուրժուական ընտանիքի այլ կողմերը: Այստեղ հեղինակի նպատակն է ցույց տալ, թե ինչպես հասարակական այդ նոր, հարաբերությունների մեջ մարդը խնդրվում է, կորցնում իր արժանիքները և բարոյապես հաշմանդամ դառնում: «Շողոքորթը» կամեդիայի գլխավոր հերոս Պապիկը մարդկանց սիրաշահելու համար շողոքորթում է, թնում, կեղծում: Պապիկը շուրացրել է մարդկանց թույլ կողմերը շոյելու արվեստը, լուրի իր սեփական կարծիքը որևէ հարցի մասին, նրա վերաբերմունքը, կարծիքը միաժամկետում են այն մարդկանց կարծիքի ու ցանկությունների հետ, որոնց թնում է: Զուգահեռով սեփական կարծիք, ես լուրի և կամք, արժանապատվություն, ապագայի որևէ հեռանկար նրա միակ նպատակը լավ ուտելը, սնվելն է, որի համար պատրաստ է սմեն ինչի դիմելու, թուխկի նման կրկնելու, հավանություն տալու իրեն ուղղված բոլոր հարցերին:

Բուրժուական ընտանիքում տիրող այլանդակ բարքերը շատ ավելի լայն կտալի վրա ու բազմակողմանիորեն արտացոլված են Պարոնյանի «Պաղտասար աղբար» կամեդիայում, որը գեղարվեստական տեսակետից մի ավարտուն և կլասիկ գործ է:

Հեղինակի ստեղծագործական ամենահասուն շրջանի արգասիք հանդիսացող այդ երկում գեղարվեստական ընդհանրացման ու ամբողջացման են ենթարկվել բուրժուական բարոյականության էությունը բացահայտմանը նվիրված Պարոնյանի բազմաթիվ գնահատումները:

Կամեդիայում զուգահեռ ընդգծվում է երկու գուղափար. մի կողմից՝ բուրժուական այլասերված բարքերի ցուցադրումը, մյուս կողմից՝ լիբերալ ինտելիգենցիայի խոսքի ու գործի հակասության բացահայտումը: Կամեդիայում վառ պատկերներով, սրամտ, աշխույժ դիալոգներով տրված է ժամանակի երիտասարդության այլասերված վիճակը, երիտասարդություն, որի համար՝ տիպական է իր սնամեղ, տղետ, անբան և անօգտակար էությունը թաքցնել ժողովրդի շուտավորության, դաստիարակության և այլ հարցերի մասին անգիր արված շարուն նախադասություններ կրկնելով:

Ուշագրավն այն է, որ «Պաղտասար աղբարում» մերկացվող ամբողջ այլանդակությունները

կատարվում են նվիրապահան քաղաքակրթության անունից. «զարուս ոգին այսպես կպահանջեա
ասում են հերոսները»

Քուրթուական մամուլը, հրապարակախոսները և գործիչները, որոնք այնքան սիրում էին
* աղմկել բարոյականության մասին, իրենց դատապարտելի արարքները ներկայացնում են որպես
լուսավորություն, ազգասիրություն: Սրինայի, Իսուսաբան Օդեսիի համար շատ կարևոր հարց է
պարզել, թե Կիպարը Անուշին «բարի» նպատակով սիրած է թե չար, եթե սիրել է ևս նպատակ
ազգային հառաչագիծության և լուսավորության», ապա արդարաց մեղ կանցնի, գովասանք,
դպինյա պատկերներ կընդունի:

Հայ երգիծական գրականության ամենափայլուն էջերից մեկը կարող է համարվել դա-
տաստանական խորհրդի նկատմամբ այն նկարագրությունը, որ թողնել է Պարոնյանը «Պաղտասար
աղբար» կոմեդիայում: Ռեալիստական վառ գույներով նկարագրելով այդ նկատմանը, նա ցույց է
տվել, որ արդարությունից խոսող, արդարության պահպանման պաշտոն ունեցող մարդիկ
արդարության ամենամեծ թշնամիներն են: Նրանք արդարությունը տեսնում են այնտեղ, որտեղ
կաշուք կա:

Պաղտասարի սրագնդիան, կործանումը, արդյունք են ոչ թե այն բանի որ նա իր սպի-
տությունը ու մեծամտությունը, իր մասին մեծ համարում ունենալով (սրինի Պաղտիկ կրոնն)՝
պայքարի է դուրս գալիս առավել զարգացած մարդկանց դեմ, այլ այն բանի, որ շքափանցելով
մայրաքաղաքային «նվիրապահանքող» խավի բարբորի մեջ՝ այդ խավի ներկայացուցիչներին
հետ շահվում է իր նահապետական ըմբռնումներով Կիպարն ու Պաղտասարը նույն դասակարգի
մարդիկ են: Պաղտասարին թվում է, որ դեմ իր դասակարգի ներսում կան օրենքներ, որոնց
միջոցով նա կարող է պաշտպանել իր իրավունքները: Նա սովոր չէ հասարակական նոր քար-
րերին, նրան թվում է, որ եթե սպառնացվի, թե իր կինը քանհավատարիմ դոնված է չոր
պաշտոնին մեջ, ապա արդարությունը կհաղթանակի:

Հակառակ Պաղտասարի, Կիպարը չարացրել է քուրթուական արդարագատություն կանոն-
ները, չափ գիտն, որ «փաստաբաններու մեծ մասն արդարությունն ու իրավունքը հոն կգտնեն,
ուր շատ ոտիկ կտեսնեն», և ըստ այնով էլ կարգավորում է իր գործերը, կաշառում մարդկանց և
հաղթանակով դուրս գալիս, հաշակվում է պատվավոր, օրինավոր մարդ:

Քուրթուական բարբորի ցուցադրման համար քնորոշ են Պարոնյանի «Պատույս մը Պուսո
թաղերուն մեջ» և «Պաղարավարության վնասները» աշխատությունները, որոնց մեջ երևում է
հասարակական կյանքը խորը դիտող, նրա էության մեջ թափանցող, մանրուքների միջից տի-
պականը ընտրող և այդ տիպականի միջոցով ամբողջ կյանքը ակալիստական փայլուն վրձինով
կերկայացնող մեծ երգիծարանը:

«Պաղարավարության վնասները» շարքի գլխավոր դեմքերը մեծ մասամբ արհեստավորներ
են՝ կոշկակարներ, վարսավիրներ, մանր առևտրականներ: Այնտեղ ապկա է նաև խոշոր վաճա-
րականի առևտրական ցորձարքի ցուցադրումը:

Պարոնյանը եթե խալիվո սուրբազմով մերկացնում է հարուստ վաճառականի գիշատիչ
էությունը, ապա արհեստավորների ընտանեկան բարոյական հարաբերությունների երգիծական
նկարագրության մեջ գլխում է համարվում նրա նպատակն է արհեստավորական այդ խավերին
ցույց տալ, որ նրանք իրենց պարզ սովորությունների մեջ շատ ավելի ազատ են, հանգիստ,
բարոյական, քան թե քաղարավարական այն նորմաների մեջ, որոնց ձգտում են՝ հետևելով
Քրեմստիական կենցաղին:

Այնպիսի մի լուսավոր, քաղմակողմանի զարգացում ունեցող դրոշ, ինչպիսին էր Հ. Պա-
րոնյանը, հասկանալի է, որ հրապարակի վրա դեռևս «Պաղարավարության վնասները» երբեք
նպատակ չունիք իդեալականացնելու նահապետական բարբորը, պատկերական սովորություն-
ները, նիստ ու կացը: Եթե նրա հերոսներից մի քանիսը փաստարկում են բնության ձայնին

հետևելով ցանկացած մասին նաշելու, բնելու, իրենց պոստին արձակելու՝ մասին, չպետք է ենթադրել, որ Պարոնյանը դեմ է կենցաղաչին սովորական կատմաներին՝ էականն այստեղ բուրժուական ընտանիքներին հատուկ մի շարք սովորությունների մատանցումն է նաև արհեստավորական խավերի շրջանը (վեճախաղ, պարահանդես և այլն)։ Պարոնյանը պայքարում է, որպեսզի նվազագույն կեղծ բաղարարությունը, ֆրանսիական աշխատեղծված վարք ու բարքը շարքումն աշխատավորական այն խավի կենցաղը, որի նկատմամբ նա զիջող է, և որի նկատմամբ նրա երգիծանքը ուղղող համոթից այն կողմ չի տեղեկում։

Պարոնյանի այդ վերաբերմունքը առավել սրուշակի երևում է, երբ նա նկարագրում է համեստ ապրուստի տեր մարդկանց հանումը դեպի սաշունային կյանքը։

Նախազոր սպրտատի տեր արհեստավորների կանայք, որոնց նյութական հնարավորությունը շատ սահմանափակ է, ևս շմուշու համար սղարաշրջանի սպառք՝ փորձում են մրցել հարուստ ու պեծեակեր կանանց հետ, լինել նրանց միջամայրում, սպառահանդեսներում և վեճասեզանի առաջ, հաշվի չառնելով, մի կողմից, իրենց ամուսինների սրուշին համոզմունքները, մյուս կողմից՝ նրանց նյութական հնարավորությունները։

Այս բոլորի նկատմամբ Պարոնյանը լուսնեցնում է համոթը, նրա կամեքները ցավոցնող չեն, մտերմական են, օգնող Պարոնյանի այն հայտարարությունը, թե իր պայքարողի մեջ եղինքս է բուսնում, սրանց համար չէ՛ նա եղինքը վերադարձում է իր դասակարգային հակառակորդներին՝ նույն թեաղարարությունների վիսաները շարքում կան հատվածներ, որանը Պարոնյանի երգիծական եղինքը դադող է, սպանիլ է։

Այստեղ արդեն երևում է մեծ երգիծարանի սուցիալական ստաիրանը։

Արդարի սուր սատիրայով են դժված մեծ վաճառականները իրենց ամբողջ խարդախություններով ու խարերաչություններով։

«Վաճառական մ'ես... կվարվիմ հետք այնպես, որպես պատի վարվել բասկահասի մ'հետ... Մեծ վաճառական մ'ես, ավելորդ է քան, թե մեծ խարերա մ'ես»։

Պարոնյանի սոցիալական սատիրան փայլուն կերպով դրսևարված է նրա «Պատույտ մը Պողոտ Թաղերուն մեջ» նշանավոր աշխատությունում, որը կտրվիք ամբողջացնում է սոցիալական կյանքի վառ ցուցադրումը։

Այդ երկում առավել հասակավայրեր բացահայտված է հեղինակի պատկերագրային վերաբերմունքը դեպի հասարակական տարրեր խավերը։ Իրանց մեջ նա սոսկ նկարագրող, պատկենահանող չէ, ոչ էլ էմպիրիկ պատմող։ Նա մեծ կրքով միջամտում է ամեն թաշախոխում և կայացնում իր գատավերորդ Արտաքին աշխարհագրական ու կենցաղային նկարագրությունները՝ ընթացքում նա շոշափում է հասարակական հուղող հարցեր, հրուպարակի վրա դնում աղգտյին իշխանությունների, Թաղական խորհուրդների, դանադան ընկերությունների իրական պատկերը իր բոլոր մանրամասներով։ Պատահական չէ, որ իր ժամանակին, նկարագրական այս անկարկները լույս տեսնելու օրերին, Պարոնյանը հաշ լիբրալ մամուլի և հրուպարակախոսների հոգից ենթարկվել է սուր հարձակումների, շատհասկա այն մարդկանց կողմից, որոնց զնդաններն ու շարաշահումները արձանագրվում էին Պարոնյանի «Պատույտ մեջ»։

Ինչպես մյուս աշխատություններում, այստեղ էլ Պարոնյանը մերթ համոթիտ է, մերթ արթիկ, նայած թե հասարակական ու խավերի կյանքն ու կենցաղն է նկարագրում։

Տարրեր գասակարգերի նկատմամբ նրա վերաբերմունքը առավել հասակավայր երևում է իր հարուստ դասի կենտրոն հանդիսացող Պերա Թաղամասի և աշխատավորական Սաղաթամասի նկարագրության մեջ, «Պերայի սահմանն է՝ արևելքին խաղաժողովրդին, արևմտքին աղճատիություն, հարավին շաշուխոն և հրուպանի խարդախություն»։

Թաղամասում մարդիկ, փոխտեսի հանքագետ աշխատանքով զբաղվելու, ապրում են և անբարոյական կյանքով։ Ամուսնական անհավատարմություն, փոխադարձ անվստահություն

Հուլիոն, արհամարհանք, բամբասանք, վրեժխնդրություն՝ ահա Պերայի հատկանշական հողմերը:

Պերայում բնակվող հայերը, հեռանելով ֆրանսիական կենցաղին, կորցրել են իրենց տոհմական, ազգային հատկանիշները, ընն խոսում մայրենի լեզվով: Նրանք ոչինչ չունեն բուն հայ ժողովրդի հետ: «Ընդհանրապես կամչնան ազգային դրացում կրելու, ինչպես որ դու կամչնաս սունդ շուր կրելու»: «Մարտը ձեռքերով ու կնդուտ խղճով» այդ մարդիկ խորշում են անգամ իրենց ազգային անուններից. «Եսբապետը Քառչո, Մկրտիչը Բատիստ կըլլա հենա»:

Հակառակ յիբերալների ամբողջ աղմուկ-ազազակին հայ ազգության բաժանության մասին, Պարոնյանը հայ չի համարում Պերա թաղամասում բնակվող այդ՝ այլասերված, օտարազած մարդկանց:

«Միմանք կկարծեն, թե Պերայի մեջ 2500 տուն կա. ըստդներ այ կան 1500 է Պերայի տուներուն թիվը... Զարիադանցություն, շափաղանցություն, շափաղանցություն, իմ կարծիքով հազիվ երեք տուն հայ կա Պերայի մեջ»:

Երգիծարանը Պերային հակադրում է Սամաթիա թաղամասը, որտեղ սպրտում էին գերազանցապես արհեստավորական խավերը՝ կոշկակարներ, ատաղձագործներ, ձկնորսներ, հրկաթագործներ և այլն: Այս թաղի նկարագրության մեջ երևում է Պարոնյանի խոր գեմոկրատիզմը, համակրանքը գեպի աշխատավորները, որոնց անմիջական փոխհարաբերությունը միջանց հետ, սլարդ ու համեստ կյանքը, աշխատասիրությունը, ինտրիգաններից ու խարդախություններից հեռու մնալը, մի խոսքով՝ մարդկային ամենաազնիվ դժերը գրավում են հեղինակի համակրությունը:

Պարոնյանի այս վերաբերմունքը երևում է հենց Սամաթիա թաղամասի սահմանների ճշտումից:

«Բաժնեկին մեզմե նաև անոնք, որք սորված են ծառա եմ-ի. հոս ամեն մարդ տեր է. վասնզի ամենքն այ իրենց աշխատությունք և արհեստովը կապրին և, հետևաբար, պեչերու, էֆենտիներու ոտները չզիչու սլարտավոր չենա»:

Պերայի հարուստ հայերի դեմքին արհամարհանքով նայող երգիծարանը հպարտանում է Սամաթիայի «հաստաքազուկ ձկնորս ազգայիններով», նրանց է համարում ազգի ճշմարիտ նեցուկը, մարդիկ, որոնք իրենց գրոշները խնայելով՝ պահում են իրենց դպրոցն ու աղքատախնամ ընկերությունը, սաանց հարուստներին գիմելու:

Ն. Պարոնյանի մտանցումը հասարակական տարրեր խավերի նկատմամբ ցայտուն կերպով զբևեռված է «Մեծապատիվ մուրացիաներն» վիպակում:

Վիպակում առկա է խոշոր առևարակյան Արխաղոս ազան, մի ամբողջ խումբ հասարակական-գրական գործիչներ ջոցադրում են մանրաբուժական ինտելիգենցիային: Այնտեղ ներկայացված են նաև իրենց շարքուշ աշխատանքով սույր ու բռնակիրքները:

Հասարակական այս տարրեր խավերի նկատմամբ Պարոնյանը տարբեր մտանցում ունի, Խոշոր բուրժուազիայի, վաճառականության նկատմամբ նրա վերաբերմունքը ժխտողական է: Այստեղ նա կիրառում է սատիրան:

Արխաղոսը թունտ տեսություն ունի աշխատավորների նկատմամբ: Եթե աղքատների անուններն էլ տպվում են վերքերում, ապա ինքը չի ցանկանում նրանց անվան մոտ իր անունը տեսնել, եթե լուսանկարվելու սովորությունը հատուկ է նաև աղքատներին, ինքը չի ցանկանում լուսանկարվել: Նրա համար գերագույն հանույք է ծառաներին ձեռնելը, նրանց իր առջև դիվիդուդ կանգնած տեսնելը:

«Մեծապատիվ մուրացիաներին» մյուս հերոսներին կերտելիս Պարոնյանի նպատակն է եղել ցույց տալ նրանց աննախաձեռնի, որբույր վիճակը Արխաղոս ազաների իշխած դարաշրջանում: Ինչպես ինքը՝ հեղինակն է խոստովանում, նրա նպատակն է քննադատել նրանց ոչ թե

ամեղադրելու նպատակով ազգային խմբագիրներն, հեղինակներն, բանաստեղծներն և այլնք, այլ սեփականացնել ապագա սերնդյան ժամանակին գրական մարդոց ողբալի կացությունը:

Այդ բոլոր, ամուրացկանները բուրժուական հասարակարգում խնդված, իրենց մարդկային ազնիվ գծերը կորցրած մարդիկ են, կամաղուրի, շողոքորթ, հանոյակատար, նրանք մի քանի գրոշի համար հրաժարվում են իրենց սեփական համոզմունքներից, իրենց վարձատրողների սխալ տեսակետները համարում ճշմարիտ:

Այս հատկանիշները ամուրացկաններից մեծ մասի համար ընդհանուր չի ելելով հանդերձ, նրանցից յուրաքանչյուրը դժպրված է իր անհատականությամբ, բնորոշ կողմերով, որով տխրահանացվում ու տարրերվում է մյուսներից: Այսպես, խմբագրի մոտ Պարոնյանը ընդգծել է նրա արտակարգ շատախոսությունը, շողոքորթները, խարնչու ձգուամբը, համառությունը, հետևողականությունը՝ նպատակադրած քանի իրադարձելու խնդրում:

Բանաստեղծը այրի է ընկնում որպես Թեթևույիկ, անտաղանդ, սնամեջ ճարտի սիրահար մի շաղակերտ, սենտիմենտալ որսը հակամենքով: Հանձին «անմուսա» այդ բանաստեղծի. Պարոնյանը մեծ տաղանդով գծադրել է իր ապրած ժամանակաշրջանի համար այնքան տխրահան կան լիբերալ նողամարանությունը, որի նմանը նա ամեն օր լսում էր ազգային ժողովի նիստերում:

Անհատականացված են նաև մյուս հերոսները, մասնավորապես Մանուկ աղան, որը ինտելեկտնեցիայի շարքերի մեջ չի ելելով հանդերձ, վերջիվերջո նույն ամուրացկաններից է: Խորապես անալիտական Մանուկի կերպարի մեջ Պարոնյանը պատկերել է այն մարդկանց, որոնք, զուրկ որևէ հիմնական զբաղմունքից և ապրուստի միջոցներից, ապրում էին ժողովրդի հարվին, ազգային, քաղական գործերին միջամտելով, սաշտոնի վրա գտնվող մարդկանց համար կարիերա հարթելով, նրանց օժանդակությամբ յուրացնում էին քաղական սնդուկի պարունակությունը, ազգային գործերը դարձրած սպեկուլյացիայի առարկա՝ շրջում էին տեն-տուն, մտքեր նախապատրաստում, կարծիքներ փոխանակում:

Վեժնապատիվ մուրացկաններին մեջ միայն բեռնակիրներն են, որ քուրոսվին չեն քննադատված, նրանք հանդես են բերված որպես վեճ ու ազնիվ հատկանիշներով օժտված մարդիկ: Հայաստանցի այդ աշխատասեր և ազնիվ մարդկանց մասին է, որ մեծ կրգիծաբանը դեռևս իր առաջին ստեղծագործության մեջ, «Անտամհարույժն արևելյան» կոմեդիայում, գրել է.

«Անտոնց համար կիսսիմ, վստեղի Հույսատանի զավակունք են և հայրենիքը իր ազատության հույսը անտոնց թազուկներուն վրա գրած է, այն քաղուկներուն, որոնք այսօր տկարանալու վրա են»:

Ինչպե՞ս էր պատկերացնում ապուրա հասարակարգը մեծ կրգիծաբանը: Ինչպես 18—19-րդ րդ շատ պրոգրեսիվ մտածողներ, նա իր իդեալ հասարակարգը ներկայացրել է ուստպիական ձևով: Դա միանդամայն տարրեր է ուն հասարակարգից, որի մեջ սուրբ է մեծ կրգիծաբանը, և որը դժոխային պայմաններ էր ստեղծել աշխատավոր մարդու համար, որտեղ տիրություն էր քունությունը, մեկի բնահաճույքը որոշում էր միլիոնավոր մարդկանց բախալը:

Պարոնյանի երազած ապագա ուստպիական հասարակարգում մարդիկ ապրում են դեմոկրատական կարգերում, քամբողջ մարդիկ հասարակապետության մեջ են, այնտեղ չկա շատ մեծ, չկա հարուստ դասակարգի տիրապետությունը աղքատների վրա:

Հասարակարգում չկան նաև մարդկանց քնաչնդող պատերազմներ, մտավոր աշխատանքի անարդյունք շնն ծառայեցնում մարդկանց ոչնչացման համար, այլ այն ի սպաս են մարդկանց կարիքների բավարարմանը, այնտեղ, փոխտեսակ իրար փարատելու համար չկան քաղաքացիները մտածելու, քամբողջ միտքերին, բոլոր հույսերին ու՛ր ազնիվ աղաք երկրորդ համար են օդատարծում:

Պարոնյանի պատկերացրած ապագա հասարակարգում բնական ըսված բանը պիտի վերաբերե:

Պարոնյանը չափառես է հայ ժողովրդի ապագայի նկատմամբ և կոչ է անում տոկոսնու-
թյան, համբերութեան ու պայքարի: Նրան հատուկ շնն լայկանությունը, հոռետեսությունը:
«Քերութուններու վրա չալի թերութուններու մեծագույնն է, խեղճութեան վրա արտասուք
Մահիկն՝ ապացուցանել է, թէ սրբուն շունինք թափնուք, գրում է նա:

III

2. Պարոնյանի գրական ժառանգութեան նշանակալից մասն է կազմում նրա քաղաքական
ստափրան, որով նա մերկացրել է սուլթանական թյուրքիայի ներքին և արտաքին քաղաքակա-
նութունը, Եմրուպայան սաղտնաբարենքի թանձրաթիւնները Մերձավոր Արևելքում և հայ կղի-
յա-սլանհարսնուղտան գաղտնաբարստաների հակաժողովրդական պոթունությունը:

Անհար է 2. Պարոնյանի քաղաքական ստափրան երշտ ըմբռնել, առանց գեթ ընդհանուր
գծերով ծանոթանալու քաղաքական այն կարևոր իրադարձություններին, որոնք արտացոլված
են Պարոնյանի այդ ստափրանի երկերում:

1875 թ. սուսվել մեծ որութեամբ հրատարակ է դարիս այսպես կոչված «Արևելյան հար-
ցք», 1871 թ. թյուրքիայի ղեմ ապստամբում են Ռոսիան և Հերցեգովինան: Նրանց հետևում են
բուլղարները: Անգլիան ջանկատում է թյուրքիայի գերիշխանութեան տակ գտնվող բրիտանիա
ժողովուրդների աղատագրական ձգտումները օգտագործել իր քաղաքական նպատակների հա-
մար և իր էրսպանսիան տարածել Մերձավոր Արևելքում: Ռուսաստանը, հանդիս է դարիս սլա-
վոն ժողովուրդների պաշտպանութեամբ, ժողովուրդներ, որոնք դարևր շարունակ իրենց հույսը
գրել էին ռուսական հաղթական գեների վրա:

Հայ իրականության մեջ նույնպես սկսվում են խմորումներ: Հայ բուրժուազիայի աչ
թևք ուժեղացնում է կապը եմրուպական մեծ պետությունների հետ, իր հույսը դնելով նրանց
միջամտության վրա: Թյուրքիայի լծի տակ տառապող բուն աշխատավոր ժողովուրդը և նրա
խղճերն արտահայտող դեմոկրատական ինտելիգենցիան պայքարում են իրենց ազատությունը
Ռուսաստանի, ռուս ժողովրդի միջոցով ձեռք բերելու և իրենց արևելահայ եղբայրակիցների հետ
վերամիավորվելու համար:

Սկսվում են դիվանագիտական գաղտնի բանակցությունները թյուրքիայի և նրա եմրուպա-
կան տերերի միջև, որոնք նրան թնչազրում են թյուրքիայում հաստատել սահմանադրական
կարգեր և թղթի վրա հայտարարել բոլոր ազգերի հավասարություն, եղբայրություն, խոսքի,
անձի, խղճի, ինչքի ազատություն և այլն և գրանով էլ կանխել ազատագրական շարժումները:
Նպատացվող այդ կոնստիտուցիայի բուն նպատակն էր, մի կողմից, սահմանադրական խոստում-
ներով խաբել օրեցօր զարգացող և քաղաքական ուժ դարձող թյուրք բուրժուազիային և դրա-
նով էլ կանխել հնարավոր պետական հեղաշրջումը, մյուս կողմից՝ խաբելով հպատակ ժողո-
վուրդներին, մասնավորապես՝ պայքարի դուրս եկած հայ ժողովրդին, ավելորդ համարել Ռու-
սաստանի միջամտությունը հայկական հարցում:

Այս պայմաններում, դեռևս նոր զահ բարձրացած սուլթան Համիդը 1876 թ. դեկտեմբեր
ամսին ձևականորեն ընդունում է երիտասարդ թյուրքերի պարագլուխ Միդհատ փաշայի մշա-
կած «սահմանադրությունը» և երկրում հռչակում կոնստիտուցիոն կարգեր:

Հայ բուրժուազիայի աչ թևք, որը մտտիկ մասնակցություն է ունենում սահմանադրության
տեղեղմանը, սկսում է թժրկահարել այն, «հայկական հարցը» լուծված համարել Ռուսացիոն

մամուլը բոլորում է հակառու քաղաքականությունը, սկզբնոր համարում մուսաւասանի միջամտությունը հայկական հարցում:

Անդրիայի գրգումով Քյուրքերն սկսում են իրենց պրովոկացիաները մուսաւասանի գեմ, մի բան, որը հակեցնում է ռուս-Քյուրքական պատերազմին 1877 թ. գարնանը մուսաւասանը պատերազմ է հայտարարում Քյուրքիային: մուսական խնամակները առաջանում են մինչև Կարին, մյուս կողմից՝ մինչև Պուսի դաները և կանո առնում Ման-Ստեֆանո արձանում՝ անառ-մանե ոգևորություն և խանդավառություն պատճառելով ամբողջ հայ ժողովրդին Սան-Ստեֆանոյում կնքվում է զաշնագիր, որտեղ հաստիչ հոգված է նվիրվում Հայաստանին:

մուսական զինքի փաշուն հաղթանակը լրջորեն անհանգստացնում է Անդրիային, որն սկսում է իր գիմանագիտական խարդախ կամբիւացիաները: նա գաղտնի զաշնագիր է կնքում Քյուրքիայի հետ, որի համաձայն, Կիւրքուս կղզին կաշառք ստանալով, իրատանում է պաշտպանել Քյուրքիայի շահերը: Քյուրքերը կիւրքուց զիջում են անդրիային երկին Անգլիան, իր կողմը գրավելով Ամսորո-Հունգարիային, պահանջում է վերանույն Սան-Ստեֆանոյի զաշնագիրը: 1878 թ. հրավիրվում է Բուլոնի կոնգրեսը, որտեղ Անդրիան, Փերմանիայի և մյուս ներուպական պետություններն աշակցութիւյամբ, իր ցանկութիւնները թելադրում է մուսաւասանին: մուսական բանակները ետ են քաշվում Հայաստանից և Սան-Ստեֆանոյից:

Քաղաքական այս քույր իրադարձությունները օրր-օրին իր էջերում արտացոլում է Հ. Պարոնյանի «մատարներ», մուլտի 19-րդ գարի 70-ական թիւականներն ամենապարզ-պարզ լինելով ամբողջ հայ իրականութիւն մեջ:

Հ. Պարոնյանը արտահայտում էր գեմտիրատական այն խավերի արամադրությունները, որոնք օչ մի հույս չէին դնում օսմանյան սահմանադրութիւն վրա:

Տեսնուածն և ռադականուածն թույլ Քյուրքիան գանկում էր կնքուական սյնություններն իր քաջարձակ իշխանութիւն տակ, շունք որն է ինքնուրույնություն, Քյուրքիայի ոչ միայն քաղաքական-անասական, այլև անգամ ներքին ղեկավարման հարցերը լուծվում էին եկրուական պետությունների պաշամնաններում, այդ պետությունների կ. Պուսի դեսպանատներում:

Մյուս կողմից, այդ սահմանադրությունը հռչակվում էր հենց այն շահագրծող դասակարգի կողմից, որն ամենից առավել շահագրգռված էր նրա շարժագրվելով:

Այսպիսի պայմաններում, ցուտ Պարոնյանի, Քյուրքիայում չէր կարող լինել ո՛չ խոսքի, ո՛չ գործի, ո՛չ կյանքի և ո՛չ էլ խղճի ազատություն, որոնք ցիտրք էին, նպասակ ունեն մարդկանց աշխատավոր ժողովրդին և համողելու, որ ժողովուրդը հնուս մնա քաղաքական պայտարից:

Ասլթանական Քյուրքիայի ներքին քաղաքականության թննադատությունը առավել հատուկութիւյամբ դրսևորված է Պարոնյանի այն երկերում, որոնք մերկացնում են այսպես կոչված մանյան առաջին սահմանադրությունը և ցույց են տալիս նրա խարժքայական էությունը:

Պարոնյանը հոգված առ հոգված ներքել է այդ սահմանադրությունը:

Մյն ժամանակ, երբ ղեկեցին մամուլը, հննվելով սահմանադրության 11-րդ հոգվածի վրա, հոն էր խղճի, դավանական ազատության մասին, Պարոնյանը ղերում էր հնանյալ փաստը, խղճի ազատության կատարյալ բնագատում էր:

Կատարիայում Քյուրքերը սիմբոկով կկնդեցի կմանն ու պատարադիշ քահանային մուսաւասանի կնքելով կկնդեցվուին մնչ տեղը կխաղցունեն: Ահա դեպք մը, որտե հարատահարություն կկնք կրնար տալ, որովհետև դործին մնչ ո՛չ գանակոծություն կա, ո՛չ ալ սոյտնուած կնքություն և ցիծություն:

Պամանյան այսպես կոչված սահմանադրության 17-րդ հոգվածով Քյուրքիայում ժողովուրդները հռչակվում էին հավասար, միևնույն իրավունքներն ունեցող, իսկ ժողով Քյուրքիայի հոյատակների սեփականությունը հայտարարվում էր անձեռնմխ-

լի, սակայն առաջին մոլորակաբանը շարունակվում է հալածանքը հայերի նկատմամբ, իսկ դաժառնորդում հայ անգնն աշխատավորության նկատմամբ կիրառվում են քարաքոստական մեթոդներ՝ թալան, խոշտանգում, սպանություն: Մահմանադրության հալածանքը ընդամենը մի քանի ամիս անց՝ թյուրքերը քարաքոստաբար հարձակվում են Վանի հայերի վրա, թալանում յուր խանութները, խոշտանգում մարդկանց: Թյուրքական թերթերը, որոնք քարոզում էին, որ այլևս կյանքի և ինչքի ասպնդություն է լինելու, դրում են, թե հրդեհն է ոչնչացրել այդ հարստությունը:

Պարոնյանը նույն շուրջ այսպես է ներկայացնում իր ընթերցողներին, ըստ էության մերկացնելով սահմանադրության այդ հոդվածը ևս.

«Վաճառք սա քարաքոստ կրակին Վանա մեզ դորժած անիրավությունները, ամբողջ շուկան մոխիր դարձնելն Ետրը շատ մը ապրանքներ առիք ծախելը և:

... Բայց, ինչ որ ալ ըլլա, վստահ եմք, որ Վանա քարեխնամ կառավարությունը ասանկ շարաքարո կրակները պիտի ձերբակալէ... Չեղբով ալ չըռնվիր, որ ձերբակալէ... ասանկ շարաքարո կրակները պիտի... պիտի բանտարկէ...»:

Թյուրքիայում տիրում էր ծայր սատիհան անարխիա: Թյուրքական քաղաքացուկները Հայաստանի միջինում դուր գյուղացիներին և աշխատավորներին տնտեսական այնպիսի ծանր վիճակի էին հասցրել, որ «հայաքնակ գյուղերուն մեջ գողնալու բան չի մնացել»: Պետությունը ոչ միայն չէր պատժում գողերին ու ավազակներին, այլև քաշալերում էր, մասնակից դառնում թալանին: Ամենամեծ գողերը Հայաստան ուղարկված թյուրք պաշտոնյաներն էին, նահանգապետները: Այդ բանը Պարոնյանը տվել է սրամիտ կերպով: Ավազակները ձերբակալել են մի նահանգապետի և մի քանի գյուղացիներ, — շարունակում է Պարոնյանը, — իրենց պաշտոնակիցը մերկացնելով՝ ըսած են անոր. մեզի գեմ միշտ գանգատներ կգրվին և, Պոլիս, իսկ քեզի համար շնորհակալության նամակներ, մինչդեռ դու և մենք միեկույն արհեստը կգործենք տարբեր եղանակներով»:

Ցույց տալով պարբերական համահարակների ու սովի մատնված հայ գյուղացիության նկատմամբ սուլթանական կառավարության թշնամական վերաբերմունքը, Պարոնյանը դառն իրենիցով գրում էր.

«Փառք սալու ենք, որ թյուրքական բարեխնամ կառավարությունը շատ տարիներն հետևախառնած լինելով այս սովը, ազգու միջոցներ ձեռք առած է չուր հավատարիմ հպատակները անսթություն վարժեցնելու»:

Տնտեսական ու քաղաքական նույնպիսի դրություն էր տիրում մայրաքաղաքում, որտեղ այդ ժամանակաշրջանում ապրում էին մոտ 250 հազար հայեր: Այստեղ էլ տիրապետում էր եռյն կամայականությունը, անարխիան, աշխատավորական հոծ մասսաների ծայր աստիճան աղքատությունն ու ընչարագացությունը: Պաշտոնական և անպաշտոն գողերի ոհմակները օրը ցերեկով կողոպտում, թալանում էին ժողովրդին: Գողերն ու մարդասպանները գործում էին ազատ, իսկ նրանց փոխարեն ձերբակալվում էին անմեղ մարդիկ՝ սկյաօր, — դրում է Պարոնյանը, — տասը գողություն տեղի ունեցավ և մեկ ձերբակալություն տեղի շունեցավ, մինչդեռ ուրիշ օրերը քառասուն ձերբակալություն կլինի, և մեկ գողություն չի լինիր... Բնդհանրապես անոնք միայն կպատժվին, որ գողություն չեն ընել, վասն զի, մայրաքաղաքիս մեջ մեծամասնությունը գողերու քով է, և սահմանադրական կառավարությունները, ինչպես հայտնի է, մեծամասնությամբ կորոզին ամեն բան»:

Ը. Պարոնյանը սուր քննադատության է ենթարկել թյուրքական կառավարության ստորաքարը և չակնյական քաղաքականությունը եվրոպական պետությունների նկատմամբ, այն փաստը, որ սուլթանական կառավարությունը երկիրը ստրկական կոլոնիան մեջ էր դրել այդ սկստություններից: Քննադատելով թյուրք կառավարողների անճարակությունը, տգիտությունը, ուրի

հետևանքով նրանք տմեկ ինչի համար դիմում էին Գերմանիայի կամ Անգլիայի օգնությունը, Պարոնյանը գրում էր...

«Պատանակ ախարս պաշտունյաներ բերելու Գերմանիային, ալիկի լավ շի՛ լինիր, որ մեր քաղոր գործերը թիզմարք իշխանին հանձնենք»:

Թյուրքական պետությունը այն տասիճան էր կտրցրել իր տեսեսակյան և քաղաքական ինքնությունությունը, երկիրը այնպիսի աղքատություն էր հասցրել, որ անգամ իր պետական ապուրատում աշխատող մարդկանց և զինվորականներին չէր կարողանում սնելու տուր: Եր քննեցողներին հայտնելով այն լուրը, թե զոնե տոն օրերին պաշտունյաներին սնելու տուր համար կառավարությունը սրտել է փոխառություն կատարել քանկերից, դրա պիմաց ուրպես նրաշխարհություն և ներկայացնելով կիպրոս կղզուց ստացվելիք նկատմաները, Պարոնյանը գրում է. «ՍՊե վաճառական մր յուր գրողիրնեցուն և գործակատարներուն ամասկանները վճարելու համար յուր կալվածները կրաշխարհություն ցուլց տար, անմիջապես յուր վարկը կր կորստենը և սնանկացայնելու թով կերթուր կը նստեր»:

Թյուրքիայի տնտեսական ու քաղաքական այդ կասուստությունիկ վիճակը Պարոնյանը առավել պատկերավոր ձևով է տվել հետևյալ տաղերով. «Մեր նրկրին շորս կողմը զգումներ կապելու է, որ կարողանա շուրին երևաք մնալ»:

Ահնարկելով թյուրքական բուսականական լեծիմի ահաղորությունը, մի լեծիմ, քրտեզ մարդ արարածը ապրում է սրպես վանդակի մեջ քանտարկված տերան տնասուն, Պարոնյանը այդ երկիրը ընտրագրում էր որպես մեծ քանտու Ընթերցողներին հայտնելով այն լուրը, թե Անթաթախայում մի շարք հայերի քանտարկել են, գրում է. «Տաճկաստանի մեջ քանտ... քանտի մեջ քանտ»:

Այս է սուլթանական բուսականության ընդհանուր ընտրագիրը քստ Հակոբ Պարոնյանի ո՞րն է նրա առարկա, ի՞նչ էր է տնտում այս քոյորից:

Նրկրի այդ զժրախտ վիճակի միակ ելըր նա համարում է սուլթանական կարգերի լիկվիդացիան: Խոսելով սնանկացող վաճառականների թվի օրեցօր մեծանալու, մայրաքաղաքում ամենուրեք խանութների վրա լիկվիդացիա քառը նրկայու մասին, Պարոնյանը գրում էր. «Կարող եմ քսել, թե միայն թ. Գոան վրա լիխտախոն չէ գրված: Կավագայն չէ՞ր լիներ, եթե քաղաքայնությունը այդ յաթիրը ժողվել տար և մի մեծ լաթ կարել տալով նրա վրա ոսկի-զօժ տաքերով լիխտախոն զնկը և այդ լաթը իրան գրողակ մայրաքաղաքիս գունեուն վրա պարզեր»:

Պարոնյանի վճիռը որոշակի է ու անողոր՝ սուլթանական բուսականական կարգերի լիկվիդացիա: Թայց ի՞նչ ևստապարհով Այստեղ է, որ նա կանգ է առնում: Նրա ապրած էպուխայի հասարակական-քաղաքական կյանքի քարոջ պայմանները, սուլթանական բուսականական լեծիմի ահաղոր խառությունը նրան հարավորություն չեն տվել կաշ անելու պաշարի քնդգեմ քանապետական կարողերի: Թայց այն, ինչ տակ է Պարոնյանը, արտոհայտությունն էր Թյուրքիայում ապրող ամբողջ աշխատավոր ժողովուրդների ճշմարիտ իղձերի ու ցանկությունների:



Հակոբ Պարոնյանի քաղաքական սատիրայի մեջ առանձնահատուկ տեղ է բռնում տնտեսական այն պայթույթը, որ մեծ նրդիծաքանը հաշրանդատական գիրքերից մղկ է նվազապես գաղութարարների դեմ՝ բացահայտելով քաղաքակրթության անունից հանդես եկող, խաղաղությունից խոսող այդ պետությունների թաղանջական նպատակները, իսկ ժողովուրդներին նկատմամբ նրանց ցուցարկած դադանային տեսությունը:

70-ական թվականների վերջերին Հ. Պարոնյանի կողմից եվրոպական զազուժարարների դեմ մղված պայքարը թելադրված էր հայ հասարակական կյանքը հուզող տեսնական և քաղաքական կարևոր հարցերով: Հայ բնակցիտն մամուլը, մասսաների ուշադրությունը ամեն կերպ հեռացնելով սոցիալական պայքարից, արդեւակելով բանապետական ուժի դեմ խմորվող մասսայական քաղաքական շարժումները, ծգտում էր հայ ժողովրդի փրկությունը կապել քաղաքական եվրոպական զազուժարարների հետ, ակտիվ բազաքական պայքարի փոխարեն որգեղելով դիվանագիտական կոմերիենացիաների հանապարհը:

Գեմեկրատական հոսանքը, արատհույանելով ուշիատաղոր ժողովրդի ցանկությունները, Հ. Պարոնյանի և այլ առաջավոր մտածողների գլխավորությունը ցույց էր տալիս այդ քաղաքականությունների վնասակար էությունը և կոչ էր անում ինչ շտալ, որ բնակցիտն տարրերը ժողովրդի արգար իրավունքները վստահեւ եվրոպացիներին՝ ելնելով իրենց տեսնական, տեսարական շահերից:

Սուր քննադատություն ենթարկելով հայ էֆենդիների լսելնական թծանքը եվրոպական մեծ պետությունների նկատմամբ, Պարոնյանը ցույց էր տալիս, որ եվրոպական պետություններից ոչ մեկին չէ հետարբրում հայ ժողովրդի ո՛չ անցյալը և ո՛չ էլ ներկան: Նրանք այդ բոլորի մասին շաղակրատում են միայն իրենց տեսնական և քաղաքական էքսպանսիան՝ Մերձավոր Արևելքում ուժեղացնելու համար:

Պարոնյանը հետևողական կրթությունը ցած էր աւնում զազուժարարների դիմակը, ցույց էր տալիս, որ այդ բոլոր յուղերն ու մարկիղներն ունեն մի ընդհանուր նպատակ՝ թաւանել փոքր ժողովուրդներին:

Այն օրերին, երբ Կ. Պոլսի եվրոպական դեսպանները գումարում էին իրենց գնապանաժողովները, որոնք, իրր թե, ինչպես աղգարարում էր բուրժուական մամուլը, պիտի գրազվեն նաև հայկական հարցով, Պարոնյանը գրում էր.

«Կըսեի, ըսի, կըսեմ, և պիտի ըսեմ, — ամեն մարդ իր շահը կը նայի: Ընկցյալ օր մայրաքաղաքիս դեսպանները դարձյալ ժողով ըրին: Ինչ խոսեցան գնապանները հայտնի է, յուրաքանչյուրը յուր շահուն վրա խոսեցաւ:»

Իսկ մի այլ տեղ նա գրում է. «Երբ ձեռքս գրապանս կխոթեմ և ունայն դուրս կը քաշեմ, կըսեմ՝ բրիտանների վիճակը շատ դն է:»

Արեւմտաեվրոպական պետությունների առանձին դիվանագետներին, պետական գործիչներին քննադատելով, Պարոնյանը երևան էր հանում կապիտալիստական թվյալ երկրի քաղաքական նկատառումները՝ կապված Արևելյան հարցի լուծման հետ: Այսպես, Գերմանիայի ասնձգությունները նա ցույց է տվել այսպիսի տողերով, «Քայմզ քանի մը ատենն ի վեր Բիզմարկ իշխանին ոտքն ընկեր, կաղաչե, որ միշամտություն մը ընե: Դուք գործին մեջ մտնաք նե, կըսե Քայմզ, խաղաղություն կըլլա, խըյաննիս:— Ի՛նչ կուտաք ինձի գործին միցամտելու համար, կը հարցնե իշխանը: Այս խոսքն կը հայտնվի, — շարունակում է Պարոնյանը, — որ էթե Բիզմարկ իշխանին հարչուրին տասը քամիսուն մը տանք, պիտի քարհհանի գործին մեջ մտնալու:»

Սույնպիսի դիպուկ տողերով նա մերկացրել է Անգլիայի քաղաքական ու տեսնական նկատառումները: Այդ միտքը Պարոնյանը հստակ կերպով արտահայտել է իրգ Բիկոնսֆիլդի ծայրի ու նրա արձագանքի դիպուկում: Բիկոնսֆիլդը ասում է.

- Մինչև վերջը իմ դատս պիտի ուշապանեմ:
- Պաշտպանեմ, — լավում է արձագանքը:
- Եթե հարկ ըլլա, պիտի պատնալովիմ:
- Եթե հարկ ըլլա պիտի պատնալովիմ:
- Արգարություն համար:

— Շահույզ համար, պատասխանեց արձագանքը:

Արևելքի ժողովուրդների բախտը իրենց քաղաքական էքսպանսիայի տարածմանը ծառայեցնող եվրոպական պետությունների մեջ 19-րդ դարի երկրորդ կեսին առավել մեծ ախտի վաթյուն հանգես էր բերում Անգլիան, որը ստրկացնելով և թալանելով բազմաթիվ ժողովուրդներ՝ միջազգային կյանքում ուներ որոշակի ազդեցություն:

Անգլիան իր դադութարարական ամբողջ ձեռնարկումները կատարում էր քրիստոնյա ժողովուրդներին փրկելու, նրանց լուսավորելու կնիք մարդասիրական հասկացով, որոնք արձագանք էին դառնում նաև հայ լուսժողովական մամուլում:

Ահա թե ինչու Պարսեյանց առավել մեծ կրքոտությունը մերկացրել է անգլիական գիվու-նագիտության խաղերը, որոնց առաջին զոհերից մեկը լինում էր հայ ժողովուրդը նա Անգլիայի այդ կնիք դեկլարացիաները, ամարդասիրական շտաբը և նրա գործնական նկատառումները համեմատում էր սոստայելական երկիրեսանի Յանսոն հետ, որը մի կրեսով ծիծաղում էր, մյուսով շաց լինում:

Անգլիայի այդ երկիրեսանի քաղաքականությանը հանդես էր դալիս առավել որոշակիությամբ անգլիական պաշտոններում և չիրկուտ մամուլում գիլանագիտական այս կամ այն խնդրին արված մեկնարկությունների ժամանակ, որոնք շարունակ փոխվում էին՝ հայած թե Անգլիայի անտեսական և քաղաքական շահը ինչ էր պահանջում:

Մերկացնելով հայ սեպիցիոն մամուլի աղմուկ-աղաղակը, որ եթե մվրոպայում, հատկապես Անգլիայում հասարակական կարծիք սակզծվի հայ ժողովրդի մասին, ապա այդ երկրները թրքերական կառավարությանը կնարկագրեն բարեկամելու հայերի վիճակը, Պարսեյանը գրում էր, որ Անգլիայի գիվունագիտական շրջանակներում ստեղծված հասարակական կարծիքը ստանի հերթին արտահայտում է անգլիական կառավարության շահերը, եթե սեպիական շահ կա, ապա այդ կարծիքը ամեն օր կարող է փոխվել: Անգլիո հասարակական կարծիքը իմ հովանաթիս կը նմանի, — գրում էր Պարսեյանը, — հովը թիչ մը սաստիկ փշելուն պես մյուս կողմը կտանա կորս, սորդինն որ շահ տեսնա, ան կողմը կը դառնա:

Այն ժամանակ, երբ հայ լիրերու մամուլը ներքուքներ էր հյտուում եվրոպական պետությունների հասցեին, մեծ հուշներ էր կատարում Քնուլին մեկնած հայ պատգամավորների հետ, որոնց, ցույց տալով հայ ժողովրդի համար գրա ընթած արգյունքը, գրում էր, թեթե օգուտներում երևակայականը մեկդի նեռելով, իրականին դառնանք, սա օգուտը կը գանենք, առաջ գաղառներուն մեջ եթե սարին հարյուր հոգի կսպանենին, այսօր հազար կազանենին: Այս ալ մեծ օգուտ է անշուշտ անոնց, որք քաղմութենեն շեն ասործիր:

Մվրոպական դադութարարների արհամարհանքը փսրք ժողովուրդների նկատմամբ, հատկապես հայ ժողովրդի շահերի ոտնահարումը Պարսեյանը քրանշելի ձևով նկարագրել է ՎՃր-քաններուն քողոքայիրքի վերնագրով Գեյլիստունում, որը այլապեսերեն պատկերում է վերստին Քնուլի կոնգրեսը: Մրչյունների կողմից ուղարկված պատգամավորները, այսինքն՝ հայ կառավարները, մվրոպայում արժանանում են քացարձակ արհամարհանքի: Նրանց նույն ժամանակ թողնում ներկա լինելու կանգրեսի նիստերին: ԱՄրտոնություն կը արվի դռնեն դուրս Քնուլի մը վրա և վիճարանության վրա իրենց դիտողությունները, եթե ունին, ներկայացնան:

Եթե ժամանակիցներից մեկը, փիղը, որի միշտցով Պարսեյանը ակնարկում է Անգլիային, հարցի մասին տաում է.

Կրքոտությունն դուրկ ստանկ խնդրո մը վրա, որ կատակերգության նյութ միայն կարծիք հայտնելը իմ արժանապատվությանս կզիտլիս:

Եթե թունտ ատելությամբ և արհամարհանքով են խոսում հայերի մասին Գերմանիայի շահերը է ընդլած եզան գիվակով, և եվրոպական մյուս գադութարարները:

Այդ պետությունների որոշումը այսպես կոչված «Հայկական հարցի» մասին, որը ձևակերպվեց Քեռլինի կոնգրեսի Տ1-րդ հոդվածում, սույնանկան կառավարության քարտեզաձև ցանկությանն էր հանձնում Հայերի կյանքի ապահովությունը Քյուրթիայում, առաջարկելով եվրոպական պետությունների դեսպաններին՝ հետևել զրա կենսագործմանը:

Հայ ժողովրդի հասցնին կատարյալ ծաղր հանդիսացող այդ շարաքատիկ հոդվածը ահա թե ինչպես էր հասկանում մեծ երդիծարանը.

«Ենկատի ունենալով, որ մրջյունները (այսինքն՝ հայերը) առանց զգալու իրենց տկարությունը և ուրիշներուն հասնելու բարի նախանձով առանկ պահանջումներ կընեն և ծաղր շարժելն ուրիշ բանի չեն ծառայեր, ժողովս կորոշե մրջյուններուն սույն առաջարկությանը վրա կրկու շարաք խնդալս:

Պարոնյանը նույնպիսի խստություն մը բնադատել է այդ դադուբարար պետությունների դեսպանների նիստերը Կ. Պոլսում, որոնք հայտնի են վեց տերությունների դեսպանաժողովների անունով: Ես գտնում էր, որ այդ դեսպանաժողովները, բացի ճաշկերույթից ու դիվանագիտական կոմբինացիաներից, որևէ կոնկրետ խնդիր չեն կարող լուծել: Այնպիսի մի ժամանակ, երբ գաղափարում հարյուր հազարավոր հայեր էին կոտորվում, թալանվում, բռնաբարվում, դեսպանները զրազված էին իրենց պետությունների դիվանագիտական սակարկություններով, այն հարցով, թե երանցից որը պիտք է ամբողջությամբ կուլ տար Քյուրթիային: Դրա համար էլ այդ դեսպանաժողովների առաջին նիստում մի առաջարկություն է լինում, երկրորդ նիստում այդ առաջարկությունը կը մերժվի: Երրորդին մեջ այդ մերժումը կը մերժվի: Զորքորդին մեջ ինչու համար մերժվելուն պատճառները կը բացատրվին: Հինգերորդին մեջ այդ բացատրություններում մութ կետերը կը լուսավորվին: Վեցերորդին մեջ լուսավորյալ կետերը կը մթնան: Ահա թե՞ վեց նիստ, որ մեկ նիստ չարժենա:

Ըր ժամանակին փոքր ժողովուրդները վիճակը բարձրելը սպեկուլյացիայի առարկա դարձնող անձնավորություններից մեկն էլ եղել է Անդրեյալի գլխավորներինց Փլադուտնը, որը մերթի հանդես էր դալիս բուլղար ժողովրդի քաղաքական շահերի պատուհանությամբ, նրանց մասին արատաանում էր հառեր, հրապարակում բրոշյուրներ, մերթ հանդես էր գալիս հայերի պաշտպանությամբ՝ հետագայում դեմագոգիկ կերպով հայտարարելով, թե օգնել հայերին, նշանակում է օգնել քաղաքակրթությանը: Երա այսպիսի գեմագոգիաները, կեղծ «հայասիրական» ելույթները օգտագործելով՝ հայ բուրժուազիան նրան ենթակայացնում էր որպես հայերի բարեկամ, «հայասեր»: Հայ բուրժուական մամուլը տասնյակ հոդվածներ է նվիրել նրան, անգամ նրա մասին գրվել են անանձին բրոշյուրներ, որոնց մեջ պարբարաբը քծնանքով դովերդվել է Գլադուտնը:

Հակոբ Պարոնյանը միանգամայն այլ կերպ է գնահատել այդ մարդու դիվանագիտական գործունեությունը, ցույց տալով, որ նրան ոչ թե հետաքրքրել է հայ, հույն և բուլղար ժողովուրդների ծանր վիճակը, այլ անդլեական կառավարության ու իր սեփական շահը:

«Անտվածք սիրես,— գրում է Պարոնյանը,— շիտակ դրույն, պարոն Կյադաթըն, սա բուլղարաց վրա հրատարակած տետրանկեղ քանի՞ հազար ոսկի վստակիցարու Մի՛ պահեր ինձմե, համոզված եմ, որ ուշեկ ստակ կտրեցիր, սրովհետև եթե վնաս ըրած ըլլայիր, հիմա սո հոճաց ինգրույն վրա բուն մը գրեյու չկիր պատրաստվիր ... Պարոն Կյադաթըն, հունաց վրա գրելիթզ գրե լմնցուր, ու հայոց վրա ալ բուն մը գրել: Ասկեց տեղեկություններ կուտամ քեղի, բայց բաժին մ'ալ ինձի տալու ետս:

Պարոնյանը անողոր կերպով մերկացրել է ամերիկյան միսիոնարների կատարած տխուր դերը հայ իրականության մեջ: Արևելքի ժողովուրդների մեջ քրիստոնեության պրոպագանդան անելու արտաքին շղարշի տակ բոտ էություն լուսնակալ-քաղաքական ուղխատակը կատարույ

միտինարների գործունեությունը ազատելով կրոնական շղարշից, ցույց է տվել միտինարների քաղաքական էությունը:

Մերկացնելով Պոլսում գործող ամերիկյան միտինարներին, Պարոնյանը գրում էր. «Չպիտի մտնեն արքայաւթյուն նահ անոնք, որ բռան փարայի կտրաղը հանուն տիրոջ կրկին զնով վաճառել կուզեն», և իր րաւոյականի մեջ խորհուրդ էր տալիս զգուշանալ թայն անձերեն, որ իրենց խաճվեն սուրբ դիրքով կծախենա:



«Ազգային շոշերում» Պարոնյանը իր սատիրայի ամբողջ ուժով մերկացրել է շահագործող զատկարգների ներկայացուցիչներին:

Այդ բանը ցայտուն կերպով երևում է ամիրաների, հարուստ վաճառականների և բարձրաստիճան հողէտրականների բնագատությունից:

Պարոնյանը ամիրաներին, հարուստ էֆենդիներին ներկայացնում է որպես իրենց ժողովրդի հետ ոչ մի անշուքյուն չունեցող կեղևիչներ:

Ամիրաները, որոնք ավելի շատ մտածում էին սիրենց ձիերուն համար բարեկարգ օխտներն կառուցելու, քան սիրենց նրեխաներուն համար դպրոցներն ստեղծելու մասին, ունեին միայն մի ձգտում՝ Բ. Դուան աստիճաններով քարձրանալ դեպի սելտական պաշտոնները, բարձրանալ հայ ժողովրդին դաժանանելով և դաժանելով շահագործելով: Դրանք այն մարդիկ են, որոնք եթե աստիճան մը բարձրանան, հայերեն շխտուչու ուխտ կընեն, եթե սլատվանջան մ'այրենեն, հայերեն խոսողը անանչեն պատի մը վրա դաժնու շտի հառաջ կերթան, և եթե քիչ մալ բարձրանան, ազգային իրավունքները աճուրդի կհանեն, կարծելով, թե այս ընթացքով ավելի բարձր աստիճաններու կհասնելու:

Բնութագրական է Պարոնյանի «Ազգային շոշերի» այն հատվածը, որը վերաբերում է կատարած նրամյան ամիրային: Պարոնյանը իր ժխտողական վերաբերմունքը դեպի այդ ամիրան անհայտել է ոչ միայն պորտրի գաղտնիարական բովանդակությամբ, այլև ձևի մեջ: Այն զնայում, երբ մյուս շոշերին նա հատկացնում է երեքից շորս էջ, նրամյանին հատկացնում է յոթնամեկը 3 տող, որից մեկը նվիրված է նրա սհասարակական գործունեությանը բնութագրմանը և հետևյալը է. «Մզկիթ մը շինած էս»:

Այդ մի տողի մեջ երկում է այլասերված, օտարացած ամիրայի սերտ կապը թյուրքական անկախի հետ:

Մենչոքս անկցիտն մամուլը, շողորթիցով ամիրաներին, փորձում էր սքողել նրանց շահագործողական էությունը, համոզել միամիտ ընթերցողին, որ նրանք նյութական միջոցներ են շոշերի իրենց խելիքի և կազմակերպչական ընդունակությունների շնորհիվ, Պարոնյանը ամիրաներին ներկայացնում է որպես աշխատավոր ժողովրդին կողոպտող ավազակներ:

Կարծելով մի ամիրայի մասին, որն իր ամբողջ կյանքում որևէ օգտակար աշխատանք չի արել, բայց Բաֆորի երկու ամիրին կառուցել է հոյակապ շենքեր, Պարոնյանը հարցնում է. «Ինչու կառուցած է զանոնք, մի՞ հարցներ՝ հախշտակությամբ կառուցած է»: Ծվ ապա հարցնում է. «Ե՞վ այս զոզերը մեծ հարգ ու պատիվ կվայելեն հասարակության մեջ, որ իրենց համար, շատ խելացի, շատ ճարպիկ մարդեր են, կանխավ պատրաստած են իրենց

Պարոնյանի դասակարգային ատելությունը աշխատավորների նկատմամբ Պարոնյանը հետևյալ տողերով. նրանց սովորությունն է քարհետավորի մը հետ այնպես խոսել, որ կվարժի կռանն երկաթին հետ: Նրանց համար քղաատիրարակի մը հետ խոսելը

ավանակի մը մըս հեծնելով Թրուսաղեմ մտնել է», զիմքագրի մը բարե տալը անոր պատվանշան տալու շափ արժեք ունի իրենց ըսելու:

«Աղջկային շողերում» Պարոնյանը ժխտողական վերաբերմունք է հանդես բերել հայ եկեղեցու և հայ կղերի նկատմամբ, որը սմիայն որովայնի կծատան և արդարաբարությունը միշտ յուր կոկորդի մեջ կփնտառե»:

Պարոնյանը այն կարծիքն է արտահայտում, որ հոգևորականությունը, որն է հանրագրու գործ չկատարելով, ապրում է ժողովրդի հաշվին ինչպես մակարոսի, և որ այդ բոլոր վարդապետները, եպիսկոպոսները, օգտագործելով ժողովրդի նախասպառումներն ու սպիտակությունը, իրենց ներկայացնելով որպես հոգու փրկիչներ, «կեննն իրենց ժողովրդյան վրա կը նստին և անոնց անտանելի բռն մը կը կըլլան»:

Անգրագասնալով Հայաստանում ծայր առած սովին, որի վերացման համար սուլթանական կառավարությունը ոչինչ չէր անում, իսկ հարստաները իրենց սմբարները ավելի ուժեղ էին փակում (որպեսզի հետագայում ավելի թանկ ծախեն իրենց ցորենը), Պարոնյանը շատ կոնկրետ առաջարկ էր անում.

«Մոզյակներուն օգնելու համար նամբա մ'ալ նս կատարելիմ, այն է սովյալ դավաճաններն հեռացնել այն մարզերը, որ շատ կուտեն, հետևապես կառուցարկիմ, որ վանահայրերը Պոլիս կանչվին, մանավանդ Մամբուր եպիսկոպոսը, որ Մշո վանքը ամբողջ կերպով»:

Պարոնյանը, ինչպես իր ժամանակին Մ. Նալբանդյանը, հայ հոգևորականներին բնագատում է այն բանի համար, որ նրանք կատարում են շահագործող դասակարգերի հասարակական պատվերը, օգտագործելով մամուլը, նկնդեցական ամբիոնները՝ փորձում են օրինակաւնացնել աշխատավոր մասսաների կեղծքումը:



Կղերա-Ֆեոդալական գաղափարախոսության դեմ Պարոնյանի մղած պայքարը սերտ կերպով կապվում է այն պայքարի հետ, որ 60-ական թվականներին մղում էր Մ. Նալբանդյանը ռեակցիոն այդ գաղափարախոսության դեմ:

Ուշագրավ է, որ Մ. Նալբանդյանի գաղափարական հակառակորդները նաև Հ. Պարոնյանի հակառակորդներն են:

«Աղգային շողերի» այն դուրսները, որոնց մեջ առավել մեծ տաղանդով բնագատված է քրիստոնեական ռեակցիոն կրոնը, բացահայտված է հայ հոգևորականների հակաժողովրդական էությունը, նվիրված են ետրեն նարբեյին և Տերոյենցին: Մրանցից առաջինին սուր քննադատության է ենթարկել Նալբանդյանը իր «Հիշատակարանում» և «Աղջմխրում», երկրորդին՝ «Ջրաշափառ խայտապանություն» հրատարակության փայլուն երկում:

Այս երկու դործիչների մասին գրելիս Նալբանդյանին և Պարոնյանին զբաղեցրել են նույն հարցերը՝ այդ մարզական գաղափարախոսության հետադիմական վնասակար էությունը բացահայտումը և նրանց պետ կուսը շահագործող դասակարգերի, թյուրքական կառավարության կամ օտարերկրյա գաղութարարներին հետ:

Տերոյենցը Պարոնյանի մտտ ներկայացված է որպես միջնադարյան խավարամտության ներկայացուցիչ, քրիստոնեական սմենառևակցիոն գաղափարներ կրող մի անձնավորություն, որպես բողոքական Պետրոս առաքյալի... փաստարան դեբորա, որը «ամեն ճիգ կը թափեր դեբորա գոյությունն հաստատել յուր դոյությունը»:

Պարոնյանը ամբողջովին ժխտել և հասարակության համար վտանգավոր է համարել Տերոյենցի գրական ժառանգությունը, որտեղ հեղինակը ձգտում էր ապացուցել դեբորա գոյությունը:

նք, պաշտպանում էր Հոռմի պապի իրավունքները, իսկ լեզվաբանական, քերականական գործերում ազավազում, ազնատում էր հայոց լեզուն:

Հասարակության արհամարհանքը դեպի Տերոյանցի նման աշխատությունները՝ Պարոնյանը նշել է նրա քերականական ձևաբանական մասին գրած հետևյալ սրամիտ նախադասությամբ. «Այս քերականության վերջին երկու մասերը արժանի չեղան լույս տեսնելու, բայց առաջինը մեծ, խիստ մեծ քննադատություն դատվ... նպարավաճառներին, սրտը հիշյալ քերականությանը սովորեցան, թե ինչպես պանիրը կը փաթածի թուղթերու մեջ»:

Խորեն Նարբեյը ևս շահագործող դասակարգերին. ծառայող, նրանց թնոզ, աշխատավոր ժողովրդի նկատմամբ ստեղծությամբ լցված մի հոգևորական է, որի քննադատության տիպական գծերն են շահամոլությունը, կեղծավորությունը, երկերեսանիությունը, սենսիզուրանքայնությունը, խաբեությունը, սերալույտականությունը, հատկանիշներ, որոնց մեծ մասը իր ժամանակին սուր ծաղրի էր ենթարկել Մ. Նալբանդյանը իր «Աղյճիք» աշխատության մեջ: Նարբեյը նույնպես, ինչպես Տերոյանցը, սերտ կերպով կապված է հարուստների հետ, սողում է նրանց առաջ՝ մի քանի օսկի ստանալու համար: Նրա արտասանած դամբանականներում, գրում է Պարոնյանը, «մեկ ոսկի տվող մեռյալը քարեխրա կըլլար. կրկու դրկողը քարեխրա և թիչ մ'ալ աղղասեր կհռչակվեր. երեք նվիրողը ազնիվ սրտով և զուժ զգայումներով կզարգարմեր. չորս համրողը հանրածանոթ աղկաունը կը ձանուցանվեր. հինգ տվողն կենդանության համանակ այնքան զազանի ողորմության տված կըլլար տղաբաններուն, որ մարդ տեսած չլր լլար, հայրենյաց քարերարը կը հորջուրվերու նվ գրանք այն մարդիկ են, որոնք իրենց կենդանության ժամանակ ազգը մուսնած են իրենց շահուն համար, կամ եկեղեցվուն զանձանալն ստակ գողցած են»:

Նարբեյի երկերեսանիությունը, կեղծավորությունը, հասարակությանը որպես ազնիվ, բարոյական, վեհանձն մի հոգևորական ներկայանալով՝ դադանի ճանապարհներով այլանդակ անբարոյական կյանք վարելը Պարոնյանը տվել է հետևյալ բնորոշ առգերով. նա «օր մը աշխարհ վեր առնելով կենան մը երես չէր նայեր... բազմության մեջ Փռվանք տվելցինը, թե մե՛նք մը տեսնվելու կասկած կամ երկյուղ չունեցած ասենն աչ չէր նայեր կիներու... եթե ծեր ունային»:

Այս հոգևորականի բարոյական կերպարն ամբողջացնում է Պարոնյանը՝ բնագծելով նրա «արհեստ անաղաղանքայնությունը, սկզբունքները որոնք սայրանք ծախելու նրա սովոր»:

Իր ժամանակին Մ. Նալբանդյանը, խիստ քննադատության ենթարկելով Նարբեյի ինքնուրույն և թարգմանական գրականությունը, «որի յուրարածյալը սողից փշում է միտակական լույս, դրանք համարել է «չառ վնասակար» հայ երկրաստարգրության համար, իսկ դրանք «մի խրթին լեզուն՝ սմի հին, մեռած լեզու, որ կորուսել էր յուր իրավունքը քնկերական ժամանակ»:

Պարոնյանը դանում է, որ Նալբեյի ստեղծագործությունները սահասարակ ճարձաներ մտեր գտնաւալուս:

Նալբանդյանից հետո հայ լիբերալիզմի շարժախիչ բնույթատեսությունը տվել է Հակոբ Մանուկյանը, բացահայտելով լիբերալներին կեղծ հայրենասիրական հասկերի սոց անանկությունը: Պարոնյանը խոստովանում էր, որ սովորելով եվրոպական երկրներում, մասնավորապես Բեռլինում կամ Գերմանիայում, վերագրանում էին հայ իրականության, ձևաբանական լույսը նպատակին էր հիշողական տվյալ երկրի քաղաքականության ու կուլտուրային լույսը: Պարոնյանը քննադատականով սփրկելու Հայաստանը նրանք Հայաստանի, հայ ժողովրդի համարում էին ստանդ ճանաչելու: աչ իրականությունը, ստանդ ճանաչըրբվելու... անտեսական վիճակով:

կիբերաշների նման գործունեությունը ծաղրել է Պարոնյանը «Ազգային շոքեր» շարքում Գր. Արծրունու և Ն. Թուսինյանի մասին գրած պորտրետներում:

Առաջադիմությունից, լուսավորությունից խոսող սրտը լիբերալ գործիչներ գործնականում վարում էին ռեակցիոն քաղաքականություն:

«Առաջդիմություն կը պոռանք և ետ կերթանք, յույս կը պուանք և դեպի խավար կերթանք: Ապագա կըսենք և դեպի անցյալը կը վազենք», գրում է Պարոնյանը՝ ակնարկելով բուրժուական մամուլի ազմուկ-աղաղակին:

Պարոնյանը դիպուկ տողերով բնութագրել է պուստոյ էֆենդիների սերտ կապը սուլթանական կառավարության հետ: Նա անխնա՝ մերկացրել, ոչնչացնող ծաղրի է ենթարկել լիբերալ այն խմբադիրներին, որոնք, եթե փող ստանան, հաճույքով սերկու անգամ երկուքը հինգ կը ներկայացնեն, վանմափայլ, բարձրապատիվ ամականներով կը կոչեն՝ երբ մեկը հաճի կես կանգուն քաղմիր եվիրել իրենցս:

Ռեակցիոն խմբադիրներից մեկի անակզբունքայնությունը Պարոնյանը ծաղրել է հետևյալ քնորոշ տողերով. «Այսօրվան պաշտպանած սկզբունքը հետևյալ օրը կը հարվածեր և վաղվան պաշտպանելիք սկզբունքը օր մը առաջ կը հարվածեր... Իր նպատակին հասնելու համար միևնույն խնդրույն մեջ այնքան կարծիք կը փոխեր, որչափ որ կայարան կը փոխել Լոնդոնի շոգեկառքը Պոլիս հասնելու համար... Յգան ախրան շուտ սկսավ փոխել յուր կարծիքները, որ քնթերցողը ալ նունեն շկրցավ հասնիլ: Անոթի ըլլար են՝ ժողովրդական էր, պատառ մը հաց ուտելու պես՝ միայնտական կգտնար»:

Այսպիսի ոչնչացնող և ժխտողական դիրք գրավելով հայ ռեակցիոն մամուլի և մամուլի գործիչների նկատմամբ, Պարոնյանը, բնականաբար, չէր կարող հանդուրժել, որ հայ ժողովրդի հոգևոր սնունդը կազմեն ռեակցիոն դադափարախոսությունը տողորված, անկումայնություն, հուսահատություն բերող գրվածքները: Նա դիպուկ կներպով այդպիսի մարդկանցից մեկի մասին գրում էր, սիրելի մատենագիր շատ ծառայած է ազգին, չհրատարակելով յուր երկասիրությունները:

IV

2. Պարոնյանի գեղարվեստական ստեղծագործությունների խոր դեմոկրատիզմը, ժողովրդայնությունը չէ միայն, որ ապահովել են դրանց մնայուն տեղը հայ կյանքի գրականություն մեջ:

Նրա երկերում դադափարական այդ առողջ նպատակասուցությունը սերտորեն զուգորդվում է գեղարվեստական այնպիսի քաջառիկ արժանիքների հետ, որոնք Պարոնյանին իրավամբ դարձնում են համաշխարհային երգիծական գրականության ակնանվոր ներկայացուցիչներից մեկը:

2. Պարոնյանի գրականագիտական-գեղարվեստական հայացքները օրգանապես կապվում են Մ. Նալբանդյանի էսթետիկական ըմբռնումների հետ: Թե՛ Նալբանդյանի և թե՛ Պարոնյանի մոտ արվեստը ամենից առաջ ծառայում է մարդուն, նպատակ ունի նպաստել նրա կյանքի բարձրագույնը: Այն գրականությունը, արվեստը, որոնք չեն նպաստում աշխատավոր ժողովրդի մտավոր զարգացմանը, չեն համապատասխանում նրա դասակարգային պահանջներին, դատապարտելի են ու մերժելի:

Որպեսզի գրականությունը ծառայի ժողովրդին, պետք է հարստատորեն և մեծ տաղանդով արտացոլի հասարակական կյանքը, իրական հարաբերությունները և իր վճիռը կայացնել նրանց նկատմամբ: Այս է և՛ Նալբանդյանի, և՛ Պարոնյանի պահանջը:

Պարոնյանի գրականագիտական ըմբռնումները, գրականության զարգացման նրա տեսու-

Քյուրե հասակ կերպով շարագրված են հայ ռոմանտիկ վիպասանուհի Արրուհի Տյուսարի «Մայր-տառ» վեպի քննադատությունը նվիրված ընդարձակ աշխատության և վերջապես Մերենցի էր-կերի քննադատության մեջ:

Պարոնյանը ամենից շատ բննադատում է ռոմանտիկ հեղինակներին կողմից կեղծ սխալու-ցիաներ, մարդկային փոխհարաբերություններ և հոգեվիճակներ ստեղծելը: Նա քննիցս ընդ-գծում է, թե այն գրականությունը, որը չի համոզում ընթերցողին, չի հուզում նրան, մաս-նակից չի գարծնում իր հերոսների վշտին և սրբախաբյանը, այդպիսի գրականությունը որևէ շահով չի կարող ազդել ընթերցողի վրա: Հեղինակի սուսցին պարտականությունն է իր նկարագրած նույնը ներկայացնել այնպես, որ ընթերցողը հավատա նրա խոսքերին, հա-վատա, որ այդպիսի դեպք կատարվել է կամ կարող է կատարվել, որից հետո արդեն նա կշահված կարող է հասնել վեպին: «Մայր» կը հուզվի այն անսարսնակներ, — գրում է Պարոն-յանը, — որոնց կը հավատա, և հեղինակը նրան կուզե, որ յուր գործը ազդեցություն ունենա, սիրտերն ու միտքերը հուզե, նախ և առաջ պարտավոր է ամեն հետաքրքիր և նույնիսկ անհետ-միջոցներ ձեռք առնել հավատացնելու համար, թե ժողովրդական կյանքին քաղված դեպքի մը նկարագրերն է այդ նրկատիրությունը:

Իսկ որպեսզի հեղինակը կարողանա այդ անել, հավատացնել իր ընթերցողներին, համոզել նրան, պետք է ունենա կյանքի հանաշարություն, այդ կյանքի սխալական կողմը իր մանրուք-ներին մեջ անցած տեսնելու կարողություն և տաղանդ:

Հ. Պարոնյանին գրազնցնող գրականագիտական հարցերից մեկն էլ նշել է գրականու-թյան մեջ ազդու չին հատկանիշների քաջահայտման անհրաժեշտությունը: Նա սրբուն անողո-թությունը քննադատել է Պերսի Քալամասի այլուստրված, օտարացած հայերին և նրանց չի հաշվել հայ ժողովրդի մեջ, նույնիսկ խստորեն բննադատել է այն գրողներին, որոնք, օգտագոր-ծելով հանգերը հայերին լեզուն, գրական հրապարակը ողողում էին այնպիսի գրականությամբ, որը կապված չէր հայ իրականության հետ: Այդպիսի գրողներից էին Ծ. Տեմիրճիբաշյանը, Խ. Կոթարյանը և ուրիշներ, որոնց ստեղծագործությունները ֆրանսիական կյանքի ու կենցաղի պատճենահանումներն էին հայերեն լեզվով և հայկական անուններով:

Հայ իրականությանը, անտեսական ու կուլտուրական կյանքին անտեսյակ այդ մարդիկ նրանց մտքի սեանկությունը փորձում էին ծածկել օտար հեղինակներից կատարված անտեղի-մեջդերումներով: Գրանցից, օրինակ, միտով քանաստեղծ Ծ. Տեմիրճիբաշյանի մասին Հ. Պար-ոնյանը գրում է.

«Երբեմն ինքը իր սած ասեն իրեն ասի այնպիսի մեջ կը նեղվի: Մա խոսքը չի մոռցնում, վիկ-տոր Հյուգո, Վոլտեր, Լամարտին և ուրիշ հարյուրավոր հեղինակներ կուզան խոսքի մեջ կը խառնվին, այնպես որ ընթերցողը կտրտվի ըսել, «կամ սովորող այ լեզուք, կամ մեկին մեկին կուզեք, որ հասկանա ինչու համար մտքին ուղղությունը դեմ ապաստամբի և ընթերցողները կուզան, «Ստոմա, շիտակ համարգ գնա, ինչ կա սմեն բալլավորի մեկ հեղինակի կուզան ասենելու»:

Վերջով առաջին նախապայմաններից մեկը Պարոնյանը համարել է գեղարվեստական գրական արտահայտչական միջոցների ու սյանկիրների բնականությունը, համոզու-թյանը իրական լինելը՝ վերամբարե, հոգում ոճը, գրական սեփեթանքը, որոնք սխ-ալակ են: հասարակական կյանքում, բայց օրատորեն օգտագործվում են ռոմանտիկ հեղինակի կողմից, ընթերցողի մեջ ոչ մի դրացում, վերաբերմանը չեն առաջացնում գնալի-կուզան կյանքը:

Վերջի վերջի թերություններ նշելով Տյուսարի, Մերենցի և այլ վիպասանների մաս, Պար-ոնյանը ցատումով հարցնում է այդ մարդկանց, թե ով է ստել նրանց, որ իրա-նական իր խոսքերն են ներկայացնելը, մարդկանց բնական խոսակցությունը վերաբար-

դրելը անվեր գծվար է, քան կնդծ ու շինծու նոսոմ ոնը, ով է ասել, գրում է նա, որ բազմիք գծվար է մեկու մը պատկերը հշտությամբ նկարելը, քան թե երևակայությամբ անրնական պատկեր մը գծելը»:

Պաշտպանելով լեզվական ռեալիզմը, այն, որ հեղինակը իր ընթերցողներին հետ պետք է խոսի ամենապարզ, հասկանալի ու մատչելի լեզվով, Պարոնյանը սուր քննադատության է ենթարկել այն գրողներին, որոնք իրենց անկարողութունը փորձել են ծածկել հայոց լեզվի բառապաշարը լարաշահելով, իրենց ստեղծագործութուններում բազմապիսի քառեր շաղ տալով, հաճախ իրենց տաղաչափությունը տեղը բերելու համար աղավաղելով ու աղճատելով այդ քառերը, փոխելով նրանց իմաստը «Փափիկ, Լուսին, սրինգ, մարդադեսին, սոխակ, մանավանդ կուսիկ իրարու ձեռք կը հափշտակվին և կերթան մտնել ամեն ոտանավորներու մեջ»:

Մեծ երգիծաբանը անտաղանդ այդ բանաստեղծներին համարել է «խոսքի վարսավիրներ», «խառաքրություն ուսած, գրականությամբ զբաղվող» մարդիկ. այդպիսի գրողը ասողինն, անդինն խոսքի հավաքելով, ղանոնը կը ստնարն, կկոկե, անուշաբույր յուզերով կոծե և հրապարակ կհանե և երկու տողով հասկնալի բան մը յուր գրչին տակ երկու էջի մեջ անհասկնալի կըլլա»:

Ը. Պարոնյանի կարծիքով, գրական նման խոստանի դեմ պայքարելու սուղին նախապայմանը նման երկերի սուր, ոչնչացնող քննադատությունն է, այնպիսի անողոր քննադատություն, որը խաչառ հրապարակից սրբի ժողովրդի համար անօգտակար, նրան ապակողմնորոշող և գեղարվեստական հաճույք չպատճառող ստեղծագործությունները:

«Ձեռն տեսած քննադատ մը,— գրել է Պարոնյանը,— որ աղեղ հրատարակության մեջ կոկորդեն բոնե, սղմե և սպանեն զայն... Ո՛ր, պարոն քննադատներ, ո՛ր, իրավունք չունիք սպաննեցն՝ ք աղեղ գործերը և վատահ եղեր, որ պիտի գեղեցկանան անոնք»:



Պարոնյանը իր բազմամանր ստեղծագործությամբ ամբել է գրական ռեալիզմի ամենափայլուն օրինակը: Ռեալիզմը նրա ստեղծագործության հիմնական հատկանիշն է: Նրա ամենափոքր, անգամ երկտողանի արտահայտության կամ դիալոգի մեջ գրանորվում է հասարակական կյանքի և հարաբերությունների նանաչման, ընկալման արտասովոր մեծ կարողություն: Նրա գրչին անհարազատ է ռեալիզմից կատարվող ամենաանկշան շեղումը, անհարազատ է ոչ միայն կնդծ, անրնական, մտացածին, երևակայական որևէ նկարագրություն, այլև որևէ ամբողջ շաղակրատում, գրական սեթեթեանք ու պնևսիս:

Անողջ ու անմիջական ծիծաղը, որը Պարոնյանի ստեղծագործության ամենահիմնական հատկանիշներից մեկն է, պայմանավորված է խորասուս իրական, ռեալ փոխհարաբերությունների ամենաբնորոշ հատկանիշների վարպետ ընկալումով ու երգիծական բազմազան հնարներով մատուցմամբ: Այդպիսի բազմազան հնարների նա դիմում է ամեն քայլափոխում, միշտ գաննելով միմյանցից ուժեղ, տպավորիչ, իրենց հիմքում դարձյալ ռեալիստական սրամիտ համեմատություններ, աֆորիզմներ, պատկերներ:

Անգամությունը, խոսքի հակիրճությունը և իմաստի մեծությունը, ընդհանրացնող էությունը պարոնյանական աֆորիզմների ամենամեծ արժանիքներն են, որոնք միաժամանակ դարձնում են դրանք ինքնաախպ ու մնալուն ամբողջություններ:

«Տանկատանի մեջ բանտ... բանտի մեջ բանտ...
Անհար է ամբելի դիպուկ, միաժամանակ տիպական մի բնութագրում ժողովուրդների բանա հանդիսացող քարքարոսական թյուրթիայի համար, թան այս սեղմ տողը»:

Պարոնյանի արտահայտչական միջոցների հիմնական դինարանը ժողովուրդն է։ Նա ժողովրդին է դիմում յուրաքանչյուր քայլում, նրա ստեղծած սրամիտ, սեղմ առածներով հիմնադրում իր միտքը։

Հիպերբոլան, որ ժողովրդական ստեղծագործության էական հատկանիշներից մեկն է, նախ առավել տպավորիչ է դարձնում նկարագրվող երևույթը, իր ուրույն տեղն ունի Պարոնյանի ստեղծագործության մեջ։ Իրական կյանքում պոչուսիյուն ունեցող երևույթը առավել ևս անզգծելու, ընթերցողին հասցնելու նպատակով, Պարոնյանը շարժականում է նրա այն հատկանիշները, որոնք, չիտխելով տվյալ երևույթի համար ընտրողը, նպաստում են դրա ընդգծմանը։ Օրինակ, ցանկանալով այն միտքը շնչեղել, որ Պերտ Բազամասի մեղքակալական ընտանիքներում համարյա օրվա մեծ մասը անց են կացնում արգելադրվի սեղանի մոտ, նա գրում է. «Երկական օձեր ինքզինքը բուրբուրով են հայելիներուն տված է. ժամերով, օրերով, շաբաթներով, ամիսներով, ասարիներով և դարերով հայելիներուն առչն կը կանգնի և ինքզինքը կը զննեցկացունեն»։

Պարոնյանի ունակումն ընտրող կողմերից մեկն է ներկայացվող, մատուցվող օբյեկտի արժեքի կողմերի նկարագրությունը, առանց նախադասարարի սուրբ տալու Այս քանից նկատելի Պարոնյանի ոչ միայն դուրս-դուրսը աշխատանքներում, օրինակ՝ «Անգլացին չոչերում», «Մեծապատիվ մարտիկներում» կամ «Պաղատասար աղբար» կոմեդիայում, որտեղ հերոսները ներկայացված են նկարչական Բանձր ու վառ գույներով, այլև Պարոնյանի սիրած հիմնական մտքը հանդիսացող մանր նուրբներում, ակնարկներում։

2. Պարոնյանը մեծ տաղանդով, երգիծական բնորոշ սյաակներներով է արվել իր ներառյալ հերոսների ներքին, հոգնական հատկանիշները, ընտրություն տիպական կողմերը։ Այդ բանը առավել մեծ վարպետությամբ արված է «Անգլացին չոչերում», որտեղ ամեն մի իր կյանքի հիմնական գծերի շարադրումից հետո Պարոնյանը իր երգիծական սրբարներ վերաբերում է տվյալ չոչի ընտրություն համար հատկանշական գիմագծային կամ այլ ընտրություններով։

Օրինակ դրանցից մի քանիսը։ Ստ. Ասլանյանի մասին՝ «Ամեն անգամ որ անասծ նմ զինքը օրտախանական ժողովուրդ տաննապետական աթոռի վրա, կարծած կմ, քե լուծողական դեղ չէ, որ մոտ է յուր արդյունքը ցցունելու»։ 2. Շիշմանյանի մասին՝ «Ամենպիսի դեմք մը որ կարծես փոկպառ կուզե և շիրնար»։ 2. Մերեմեզուլիի մասին՝ «Ընկ երբ դեմքը վեր կը ներկայացնե այն մարդուն զեմքը, որ կըզի չոչեմազուն հասնելու համար վազելեն իր երբ մեկ ոտն շոգենավին մեջ պիտի դնե, շոգենավը սուլելով կը մեկնի»։ Վաստիկանի դարձված Անտոն Հասունյանի մասին՝ «Ընտ կը վերջանա կենսագրությունն այն մարդուն, որուն օր մը պզտիկ տղա մը տուննելով վախցած է և մինչև այսօր կուլա»։

Պարոնյանի մոտ վակապոնիսիս ռեպրիզենտներն անգամ հետապնդում են մի նպատակ՝ վերաբերյալ անձնագործության կամ դեպքի համար տիպական սրն է կողմ։ Օրինակ, ընտրություն ընտրություն կան նրա արժեքների ընտրություն գծերը, Պարոնյանը գրում է, որ նրա ընտրություն է զիտասած ժամանակ երբեմն քանի մը քալ առնել դեպի ձախ, երբեմն դեպի ձախ շարունակում է. «Վերջերս կարծիքներն ալ ռաքերուն օրինակին հետեւեցան նրա սրտի ժողովուրդ մեջ»։

Սրտում է 2. Պարոնյանի ստեղծագործությունների զննարվեստական արժանիքները է նկատի ունենալ դերադանցապես նրա այն երկերը, որոնք հնդիսակի նկատաբար լավ մշակվել են։ Ընդ խոսք, որ մեծ երգիծարանը, գտնվելով ամեն ինչից պարբերական լցնելու, ազգային-կրոնական վնասներն օր-օրին արձայանելու նպատակով, գրել է թաղամթիվ ֆելետոններ, ակնարկներ, որոնց վրա նկատելի է Պարոնյանի կնիքը, որոնք հաճախ հեռանում են երգիծական ժանրից, գտնվում են ընտրություն, անշուշտ միշտ մեղավ խոշոր զեմոկրատ գրողի քաղաքական դավա-

նանցին հարազատ գործերը և յղույթի մակերեսայնութիւնը են զրկած մասնավորապէս ազգային ժողովի նիստերի նկարագրութիւնները, որոնք, հաճախ առկայծելով հանդերձ հեղինակի խոշոր տաղանդի ցոլցները, պարունակելով հանդերձ սրամիտ, դիպուկ բնութագրումներ, ահորիզմներ, ամբողջութեամբ վերցրած զիջում են Պարոնյանի ծանոթ երկերին և սպառնակում են բազմաթիւ կրկնութիւններ:

* * *

Ը. Պարոնյանը մեռաւ իր ստեղծագործական հասունութեան ամենաբեղմնավոր շրջանում: Ըստ էութեան դարաշրջանի հասարակական-քաղաքական դասին պայմաններն էին, որ ժամանակից շուտ նրան իջեցրին գերեզման:

Պարոնյանի ծաղրած շոշերը դամբանականներ խոսեցին նրա դազադի վրա, թափնցին կոկորդիլոսի արցունքներ, բայց ներքնապէս ուրախացան, որ ազատվեցին սյուլպիսի մի վտանգավոր հակառակորդից: Այս աշխարհում մտաշուք մեծ նրգիծարանը երկար ժամանակի Սուլթանական Քյուրքիայում, 1880 թվականից, այսինքն՝ «Ազգային շոշերի» տպագրութեան ընդհատվելուց հետո ամբողջ 30 տարի, Պարոնյանից լույս չի տեսել թեկուզ մի փոքրիկ հատոր: Դրանից հետո եղել են մի քանի սնիխում հրատարակութիւններ:

Պարոնյանի երկերի հրատարակութեան գործը համեմատաբար ավելի բարձրը վիճակում է եղել Կովկասում, որտեղ նրա «Ազգային շոշերը» 30-ական թվականներին արժանացել է երկու տարբեր հրատարակութեան, ձեռնարկվել է Պարոնյանի երկերի ժողովածուի լույս ընծայմանը, հրատարակվել են մի շարք երկեր և այլն: Սակայն, ինչպէս արեւմտահայ իրականութեան մեջ, Կովկասում էլ այդ բոլորը կատարվել է պատահական կերպով, քմահաճ կրճատումներով:

Միայն Սովետական իշխանութեան տարիներին է, որ Պարոնյանը գնահատվեց ըստ արժանիւնի, ծրագրված ու տեւական աշխատանք կատարվեց Ը. Պարոնյանի ստեղծագործութեան հրատարակութեան ուղղութեամբ. նրա մի շարք երկերի մեծ տիրածով լույս ընծայումից բացի, Պարոնյանի թողած գրական ժառանգութեան դասի մասը լույս է ընծայվել 11 հատորով:

Սովետական տարիներին Ը. Պարոնյանի երկերը թարգմանվել և մեծ տիրածով լույս են տեսել նաև ռուսերեն և սովետական այլ լեզուներով: Պարոնյանի մասին գրվել են աշխատութիւններ, այդ թվում պրոֆ. Ա. Տերտերյանի «Ը. Պարոնյանի գեղարվեստական հույացքները» արժեքավոր աշխատութիւնը:

Ը. Պարոնյանի ստեղծագործութիւնները, իրենց գեղարվեստական խոշոր արժանիքներով և առաջավոր գաղափարական բովանդակութեամբ, ոչ միայն իրենց արժանի տեղն ունեն հայ կուսակ գրականութեան հարուստ գանձարանում, այլև նրանցից առավել նշանավորները իրավամբ կարող են դասվել համաշխարհային երգիծական գրականութեան լավագույն նմուշների շարքում: